Հաստատված է

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի
2023 թվականի հրամանով

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Բովանդակություն

Ներածություն 3

1. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ..... 4

2. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ..... 9

3. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 37

4. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ, ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 53

5. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՎՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ 63

6. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԴՐԱ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ 69

7. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 75

8. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..86

9. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ...89

10. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ 96

Ներածություն

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) նպատակն օրենքով սահմանված դեպքերում և կարգով քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում անվտանգության և օրենսդրության պահանջների պահպանման ապահովումն է:

Տեսչական մարմնի խնդիրներն են քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանումը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում:

Իր առջև դրված խնդիրները կարգավորելու նպատակով Տեսչական մարմինը 2022 թվականի առաջին եռամսյակի ընթացքում հետևողականորեն իրականացրել է «ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» 11.06.2018թ. թիվ 730-Լ ՀՀ վարչապետի որոշմամբ իրեն վերապահված և 2022 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված գործառույթները:

1. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Տեսչական մարմնի 2022 թվականի գործունեության տարեկան ծրագրով սահմանված ժամկետներում և նախատեսված ծավալով կատարվել են հետևյալ միջոցառումները՝

✓ բուժ. հաստատություններում հրդեհատեխնիկական հետազոտությունների իրականացում.

✓ նախակրթական հաստատություններում հրդեհատեխնիկական հետազոտությունների իրականացում.

✓ ստուգված տնտեսավարող սուբյեկտների հրդեհային և տեխնիկական անվտանգության տվյալների բազաների ձևավորում.

✓ էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների (մասնաճյուղերում) և իրենց պատկանող էներգատեղակայանքների վերաբերյալ տվյալների բազաների ձևավորում.

✓ ստուգումների արդյունքների հիման վրա քաղաքաշինական բնագավառում տնտեսավարող սուբյեկտների բազաների ձևավորում.

✓ տրանսպորտի անվտանգության բնագավառում խախտումների համար սահմանված տուգանքների չափերի բարձրացման նպատակով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.

✓ Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ.

✓ Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում քաղաքաշինության կոմիտե.

✓ մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 17-ի «Էլեկտրակայանքների պաշտպանության և ավտոմատիկայի սարքվածքին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 42-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին.

✓ մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի «Հատուկ կայանքների էլեկտրասարքավորումներին ներկայացվող տեխնիկական պահանջներ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 75-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին.

✓ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2005 թվականի հուլիսի 8-ի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններ» թիվ 95-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.

✓ մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի «Անվտանգության պահանջները մայրուղային գազատարներում» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 119-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին.

✓ մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի «Էլեկտրակայանների և ջերմային ցանցերի ջերմաուժային սարքավորումների շահագործման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 144-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին.

✓ քաղաքաշինության բնագավառում խախտումների համար սահմանված տուգանքների չափերի բարձրացման վերաբերյալ Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակում կայացած քննարկումներին մասնակցություն և առաջարկությունների ներկայացում.

✓ մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 2-ի «Էլեկտրական ցանցերի անվտանգության գոտիների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 363-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին.

✓ մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 14-ի «Էլեկտրաուժային տեղակայանքներին ներկայացվող տեխնիկական պահանջներ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 554-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին.

✓ մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 12-ի «Էլեկտրական էներգիայի հաղորդաբաշխման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 961-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին.

✓ ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 08-ի Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին թիվ 1025-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.

✓ մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 4-ի «Էլեկտրական բաշխիչ սարքերին և ենթակայանների սարքվածքին ներկայացվող պահանջներ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1033-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին.

✓ մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 28-ի «Ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1101-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին.

✓ մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 8-ի «Մայրուղային գազատարների տեխնիկական շահագործման կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1438-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին.

✓ մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «Էլեկտրակայանների և ցանցերի շահագործման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1605-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին.

✓ ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.

✓ մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 29-ի «Գազի տնտեսությունում տարրերի տեխնիկական շահագործման կանոններ և աշխատանքի անվտանգության պահանջներ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1843-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին.

✓ մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1933-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին.

✓ մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի «Սպառողների էլեկտրատեղակայանքների տեխնիկական շահագործման կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1939-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին.

✓ մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի «Էլեկտրատեղակայանքների սարքվածքին ներկայացվող ընդհանուր պահանջներ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1943-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին.

✓ մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» տեխնիկական

կանոնակարգը հաստատելու մասին» N 2399-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին.

✓ Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանումների դասընթացների կազմակերպում՝ տրանսպորտի ոլորտին առնչվող հարցերով.

✓ Տարածքային ստորաբաժանումների կողմից 2019-2021 թվականների ընթացքում կատարած աշխատանքի ուսումնասիրություն.

✓ տեխնիկական և հրդեհային անվտանգության կանոնների պահպանման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ նախատեսված 16 իրազեկման աշխատանքների իրականացում.

✓ քաղաքաշինության ոլորտի կանոնների պահպանման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ նախատեսված իրազեկման 12 աշխատանքի փոխարեն 17-ի իրականացում.

✓ տրանսպորտային անվտանգության կանոնների պահպանման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ իրազեկման 20 աշխատանքի փոխարեն 28-ի իրականացում.

✓ իրազեկող 80 հաղորդագրությունների փոխարեն 89 հաղորդագրության հրապարակում.

✓ Տեսչական մարմին ստացված դիմում-բողոքների, վարչական վարույթների, ահազանգերի, հարցումների (թեժ գծով և գրավոր) վիճակագրության վարում, ամփոփում։

Տեսչական մարմնի 2022 թվականի գործունեության տարեկան ծրագրով սահմանված հետևյալ միջոցառումները կատարվել են ոչ ամբողջ ծավալով.

✓ էներգետիկայի բնագավառի և էներգասպառման ոլորտի կանոնների պահպանման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ իրազեկման 8 աշխատանքի փոխարեն 6-ի իրականացում.

✓ գեոդեզիայի և հողօգտագործման ոլորտի կանոնների պահպանման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ իրազեկման 12 աշխատանքի փոխարեն 6-ի իրականացում.

✓ Երևանում և ՀՀ մարզերում նախատեսված 13 իրազեկում-հանդիպումների փոխարեն 10-ի կազմակերպում՝ մարզպետարանների, համայնքների ներկայացուցիչների, պետական կառավարման համակարգի ներկայացուցիչների, տնտեսավարող սուբյեկտների հետ.

✓ նախատեսված 6 իրազեկող տեսանյութերի փոխարեն հրապարակվել է 4-ը։

2022 թվականի գործունեության տարեկան ծրագրով սահմանված հետևյալ միջոցառումների կատարումը հետաձգվել է.

✓ Քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու նպատակով առաջարկությունների ներկայացում.

✓ «Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկությունների ներկայացում,

✓ մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի «Կենցաղային նպատակներով օգտագործվող գազի սարքերի միացումները սահմանազատման կետին և ծխաօդատար ուղիներին՝ շահագործման մեջ գտնվող և նոր կառուցվող բազմաբնակարան շենքերում. անվտանգության պահանջներ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 784-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին

Տեսչական մարմնի 2022 թվականի գործունեության տարեկան ծրագրով սահմանված հետևյալ միջոցառումները չեն իրականացվել՝ անհրաժեշտությունը վերանալու պատճառով.

✓ «Գեոդեզիայի վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագծի կազմումը և առաջարկության տեսքով ներկայացում.

✓ հողօգտագործման բնագավառում խախտումների համար սահմանված տուգանքների չափերի բարձրացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.

✓ ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11–ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 730-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում:

Տեսչական մարմնի 2022 թվականի գործունեության տարեկան ծրագրով սահմանված հետևյալ միջոցառումները չեն իրականացվել.

✓ ՀՀ ԲՈՒՀերի, դատարանների, այլ կառույցների հետ համագործակցության շրջանակում վերապատրաստումների կազմակերպում.

✓ Տեսչական մարմնի ղեկավարի և ղեկավարի տեղակալների, կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարների հետ 2 մամուլի ասուլիսի կազմակերպում և անցկացում.

✓ դոնոր կազմակերպությունների, ՀԿ-ների, պետական կառավարման մարմինների հետ համագործակցության արդյունքում իրազեկող բնույթի սոցիալական գովազդային պաստառների պատրաստում և ՀՀ գլխավոր ճանապարհներին, ավտոմայրուղիներին տեղակայված վահանակներին դրանց տեղադրման աշխատանքների իրականացում:

2. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2022 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից իրականացվել է ընդհանուր առմամբ 1490 ստուգում, որից 1070-ը՝ ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված, 221-ը՝ ոչ պլանային ստուգումներ և 199-ը՝ վերստուգումներ: Ըստ բնագավառների ստուգումների բաշխվածությունն ունի հետևյալ պատկերը.

1490 ստուգում/վերստուգում

- **ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏ 66**
- **ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏ 160**
- **ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ 465**
- **ՀՐԴԵՀԱՅԻՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ 771**
- **ԳԵՈԴԵԶԻԱՅԻ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏ 28**

Հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառ

2022 թվականի ընթացքում Տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրով հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում նախատեսված էր կատարել ստուգումներ 590 տնտեսավարող սուբյեկտներին պատկանող 738 արտադրական նշանակության օբյեկտներում, բենզալցակայաններում, գազալցավորման կայաններում, առևտրի և հասարակական սննդի, գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող օբյեկտներում, գիտական և ուսումնական, հանգստյան տների և զբոսաշրջության հաստատություններում, հյուրանոցներում, ընդհանուր նշանակության, նավթամթերքի և պայթուցիկ նյութերի պահեստներում, հիվանդանոցներում, մանկական նախադպրոցական, տրանսպորտային և կառավարման հիմնարկներում: Նախատեսված ստուգումներից ավարտվել են 442 սուբյեկտին պատկանող 558 օբյեկտների ստուգումները (նախատեսված քանակի 75.61%), ևս 64 սուբյեկտին պատկանող 83 օբյեկտ ստուգվել է ըստ անհրաժեշտության: Ոչ պլանային ստուգումներից 58 ստուգում իրականացվել է ՀՀ վարչապետի հանձնարարականի, 5 ստուգում հանրությունից ստացված դիմում-բողոքների

և 20 ստուգում պետական մարմինների կողմից ստացված գրությունների հիման վրա: Ստուգումների գործունեության տարեկան ծրագրով նախատեսված 180 օբյեկտ չի ստուգվել չգործելու, ժամանակավոր չգործելու, հաշվառումից հանված լինելու, վարձակալության և սնանկության պատճառով: 2022 թվականի ընթացքում հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում ընդհանուր առմամբ իրականացվել է 641 ստուգում և 130 վերստուգում:

Հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում 2021 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 452 ստուգումներից ավարտվել են 337-ը (նախատեսված ընդհանուր քանակի 74.6%), ևս 8 ստուգում իրականացվել է հանրությունից ստացված դիմում-բողոքի և 51 ստուգում՝ պետական մարմնի կողմից ստացված գրությունների հիման վրա: Իրականացվել է 396 ստուգում և 249 վերստուգում:

2020 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 784 ստուգումներից ավարտվել էր 355-ը (նախատեսված ընդհանուր քանակի 45.2%): Եվս 56 օբյեկտներում կատարվել են ոչ պլանային ստուգումներ, այդ թվում՝ 51 օբյեկտներում՝ Վարչապետի հանձնարարականով, 2 օբյեկտում՝ հանրությունից ստացված դիմում-բողոքների հիման վրա և 3 օբյեկտներում՝ պետական մարմիններից ստացված գրությունների հիման վրա: Իրականացվել է 411 ստուգում և 99 վերստուգում:

2022, 2021 և 2020 թվականների առաջին կիսամյակների ընթացքում կատարված ստուգումների և վերստուգումների համեմատությունն ունի հետևյալ գրաֆիկական պատկերը.



Ըստ մարզերի 2022 թվականի հաշվետու ժամանակահատվածում կատարած ստուգումները/վերստուգումներն ըստ տարածքային միավորների բաշխված են հետևյալ կերպ.



2022 թվականի ստուգումների արդյունքում արձանագրվել է 4402 խախտում, որոնք ըստ մարզերի ունեն հետևյալ գրաֆիկական արտացոլումը.



Ստուգումներն իրականացվել են գործունեության հետևյալ ոլորտներում՝



Ընդհանուր նշանակության 74 **պահեստներում և բազաներում** բացահայտվել է 802 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 18,22%-ը (ընդհանուր խախտումների քանակը 4402 է)։ Չորս օբյեկտ շահագործվում է առանց թերությունների։ Ստուգումներից 26-ն իրականացվել է ՀՀ վարչապետի հանձնարարականի և 4-ը՝ պետական մարմիններից ստացված գրությունների հիման վրա։

Հիմնական խախտումներն են.

- ✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 58 դեպք,*
- ✓ *պահեստային շինությունում օգտագործվում է խրոցակային վարդակներ – 47 դեպք,*
- ✓ *էլեկտրամատակարարումն անջատող սարքերը (անջատիչները) չեն գտնվում պահեստից դուրս – 46 դեպք,*
- ✓ *կախված մակերեսի չափերից պահեստները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով – 42 դեպք,*
- ✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգը գտնվում է սարքին վիճակում – 42 դեպք։*

Նշված ժամանակահատվածում ստուգվել է **200 մ² և ավելի մակերեսով առևտրի և հասարակական սննդի 199 օբյեկտ,** որոնցից 24-ը՝ ՀՀ վարչապետի հանձնարարականի և 6-ը՝ պետական մարմիններից ստացված գրությունների հիման վրա: Ստուգումների արդյունքում բացահայտվել է 1143 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 25,97%-ը: Տասներկու օբյեկտ շահագործվում է առանց թերությունների:

Հիմնական խախտումներն են.

- ✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 147 դեպք,*
- ✓ *առևտրի և հասարակական սննդի օբյեկտները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով – 98 դեպք,*
- ✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը չեն գտնվում սարքին վիճակում – 89 դեպք,*
- ✓ *արտաքին հրդեհաշիջման համար օբյեկտների տարածքում կամ դրանց մոտակայքում (200մ շառավղով) նախատեսված չէ առնվազն 1 հրշեջ հիդրանտ կամ նվազագույնը 50 մ³ տարողությամբ հակահրդեհային ջրավազան – 83 դեպք,*
- ✓ *«Ա», «Բ», «Վ» կարգի շինություններում կրակմարիչները տեղադրված չեն հրդեհի հնարավոր օջախներից 30 մետրից ոչ ավելի հեռավորության վրա - 77 դեպք:*

Մինչև 200 մ² մակերեսով առևտրի և հասարակական սննդի 35 օբյեկտում ստուգումների արդյունքում բացահայտվել է 58 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 1,32%-ը: Տաս օբյեկտ շահագործվում է առանց թերությունների: Ստուգումներից 10-ն իրականացվել է ՀՀ վարչապետի հանձնարարականի հիման վրա:

Հիմնական խախտումներն են.

- ✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 15 դեպք,*
- ✓ *15 մարդուց ավելի միաժամանակյա ներկայությամբ սենքերի դռները չեն բացվում դեպի դուրս, բացի Ա և Բ կարգի սենքերից – 10 դեպք,*
- ✓ *արտաքին հրդեհաշիջման համար օբյեկտների տարածքում կամ դրանց մոտակայքում (200մ շառավղով) նախատեսված չէ առնվազն 1 հրշեջ հիդրանտ կամ նվազագույնը 50 մ³ տարողությամբ հակահրդեհային ջրավազան – 7 դեպք,*
- ✓ *օբյեկտն ապահովված չէ հրդեհաշիջման սկզբնական միջոցներով - 4 դեպք,*
- ✓ *բնակելի, հասարակական, արտադրական նշանակության շենքերի (շինությունների) և առևտրի ու հասարակական սննդի օբյեկտների շենքերի միջև հակահրդեհային միջտարածությունները պահպանված չեն - 4 դեպք:*

200 մ² և ավելի մակերեսով արտադրական կազմակերպությունների 99 օբյեկտներում բացահայտվել է 545 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 12,38%-ը: Ստուգումներից 14-ն իրականացվել է ՀՀ վարչապետի հանձնարարականի և 8-ը՝ պետական մարմիններից ստացված գրությունների հիման վրա: Առանց թերությունների շահագործվող օբյեկտները 15-ն են:

Հիմնական խախտումներն են.

- ✓ *կախված մակերեսի չափերից արտադրական շենքերն ու շինությունները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով – 69 դեպք,*
- ✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 67 դեպք,*
- ✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը չեն գտնվում սարքին վիճակում – 66 դեպք,*
- ✓ *500 մ3-ից ավելի ծավալով արտադրական շենքերն ու շինություններն սարքավորված չեն հրշեջ ծորակներով կահավորված ներքին հակահրդեհային ջրացանցով այնպես, որ յուրաքանչյուր կետ ցողվի 2X2,5 լ/վրկ ջրի շիթով – 48 դեպք,*
- ✓ *ներքին հակահրդեհային ջրամատակարարման ցանցի վրա տեղակայված հրշեջ ծորակները համալրված չեն փողակով և փողրակով – 48 դեպք:*

Մինչև 200 մ² մակերեսով արտադրական կազմակերպությունների 17 օբյեկտներում բացահայտվել է 63 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 1,43%-ը: Երեք օբյեկտ շահագործվում է առանց թերությունների: Ստուգումներից 2-ն իրականացվել է ՀՀ վարչապետի հանձնարարականի հիման վրա:

Հիմնական խախտումներն են.

- ✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 11 դեպք,*
- ✓ *կախված մակերեսի չափերից արտադրական կազմակերպությունները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով – 10 դեպք,*
- ✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգը չի գտնվում սարքին վիճակում – 9 դեպք,*
- ✓ *օբյեկտն ապահովված չէ հրդեհաշիջման սկզբնական միջոցներով – 7 դեպք,*
- ✓ *«Ա», «Բ», «Վ» կարգի շինություններում կրակմարիչները տեղադրված չեն հրդեհի հնարավոր օջախներից 30 մետրից ոչ ավելի հեռավորության վրա – 5 դեպք,*
- ✓ *արտաքին հրդեհաշիջման համար օբյեկտների տարածքում կամ դրանց մոտակայքում (200մ շառավղով) նախատեսված չէ առնվազն 1 հրշեջ հիդրանտ կամ նվազագույնը 50 մ³ տարողությամբ հակահրդեհային ջրավազան – 5 դեպք:*

144 **բենզալցակայանի** ստուգումների (որոնցից երեքն իրականացվել է պետական մարմիններից ստացված գրությունների և հինգը՝ դիմում-բողոքի հիման վրա) արդյունքում բացահայտվել է 647 խախտում, ինչը կազմում է արձանագրված խախտումների 14,7%-ը: Միաժամանակ պարզվել է, որ 19 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների:

Հիմնական խախտումներն են.

- ✓ *արտաքին հրդեհաշիջումն ապահովված չէ տարողություններից 40 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա գտնվող ոչ պակաս 2 հրշեջ հիդրանտների կամ ոչ պակաս 100 մ3 տարողությամբ հակահրդեհային ջրավազանի միջոցով – 94 դեպք,*
- ✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 81 դեպք,*
- ✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգը չի գտնվում սարքին վիճակում – 75 դեպք,*
- ✓ *բենզալցակայանը սարքավորված չէ հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով – 71 դեպք,*
- ✓ *հեղուկ վառելիքի ստորգետնյա տարողություններով բենզալցակայանից մինչև այլ շենքերի և շինությունների միջև պահանջվող միջտարածությունները պահպանված չեն – 68 դեպք,*
- ✓ *բենզալցակայանի տարածքն ապահովված չէ շանթարգելման համակարգով – 68 դեպք:*

23 հյուրանոցների և հանրակացարանների ստուգումների արդյունքում բացահայտվել է 125 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 2,84%-ը: Ստուգումներից մեկն իրականացվել է պետական մարմիններից ստացված գրության հիման վրա: 2 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների:

Հիմնական խախտումներն են.

- ✓ *կախված հարկայնությունից բնակելի շենքերը, հյուրանոցները, հանրակացարանները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով – 11 դեպք,*
- ✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 10 դեպք,*
- ✓ *կազմակերպության աշխատակազմը ապահովված չէ անհատական պաշտպանական միջոցներով (շնչառական դիմակներ, հակագազեր և այլն) – 10 դեպք,*
- ✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգը չի գտնվում սարքին վիճակում – 9 դեպք,*

- ✓ *«Ա», «Բ», «Վ» կարգի շինություններում կրակմարիչները տեղադրված չեն հրդեհի հնարավոր օջախներից 30 մետրից ոչ ավելի հեռավորության վրա – 9 դեպք:*

Նշված ժամանակահատվածում ստուգվել է 111 **գազալցավորման կայան**, որոնցից երկուսը՝ դիմում-բողոքի, 3-ը՝ պետական մարմիններից ստացված գրությունների հիման վրա: Ստուգումների արդյունքում բացահայտվել է 737 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 16,74%-ը: Ինն օբյեկտ շահագործվում է առանց թերությունների:

Հիմնական խախտումներն են.

- ✓ *գազալցակայանի տարածքում տեղակայված շինությունները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով – 60 դեպք,*
- ✓ *արտաքին հրդեհաշիջումն ապահովված չէ տարողություններից 40 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա գտնվող ոչ պակաս 2 հրշեջ հիդրանտների կամ ոչ պակաս 100 մ³ տարողությամբ հակահրդեհային ջրավազանի միջոցով – 59 դեպք,*
- ✓ *հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգը չի գտնվում սարքին վիճակում – 46 դեպք,*
- ✓ *ԱԳԼՃԿ-ի տարածքում իրեն պատկանող շինությունների միջև նորմերով պահանջվող նվազագույն միջտարածությունները պահպանված չեն – 46 դեպք,*
- ✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 43 դեպք:*

Գիտական և ուսումնական 7 հաստատություններում բացահայտվել է 66 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 1,50%-ը:

Հիմնական խախտումներն են.

- ✓ *շինարարական հիմնատարրերը մշակված (տոգորված) չեն հրապաշտպան լուծույթով կամ պատվածքով և չեն գտնվում մշակման (տոգորման) ներգործության ժամկետների մեջ – 5 դեպք,*
- ✓ *կախված մակերեսի չափերից գիտական և ուսումնական հաստատությունների շինությունները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով - 5 դեպք,*
- ✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 5 դեպք,*
- ✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը չեն գտնվում սարքին վիճակում – 5 դեպք,*
- ✓ *«Ա», «Բ», «Վ» կարգի շինություններում կրակմարիչները տեղադրված չեն հրդեհի հնարավոր օջախներից 30 մետրից ոչ ավելի հեռավորության վրա – 4 դեպք:*

Գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող երկու կազմակերպությունում բացահայտվել է 10 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,23%-ը:

Առողջարարական, հանգստյան տներում և զբոսաշրջության 10 հաստատություններում բացահայտվել է 59 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 1,34%-ը:

4 **հիվանդանոցում, պոլիկլինիկայում և ամբուլատորիայում** բացահայտվել է 10 խախտում, ինչը կազմում է բացահայտված ընդհանուր խախտումների 0,23%-ը: Մեկ օբյեկտ շահագործվում է առանց թերությունների:

10 կառավարման հիմնարկում բացահայտվել է 72 խախտում, ինչը կազմում է բացահայտված ընդհանուր խախտումների 1,66%-ը: Ստուգումներից մեկն իրականացվել է ՀՀ վարչապետի հանձնարարականի և երկուսը պետական մարմիններից ստացված գրությունների հիման վրա: Մեկ օբյեկտ շահագործվում է առանց թերությունների:

Մանկական նախադպրոցական 2 հիմնարկում բացահայտվել է 14 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,32%-ը:

Նավթամթերքների 3 պահեստում բացահայտվել է 12 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,27%-ը: Ստուգումներից մեկն իրականացվել է ՀՀ վարչապետի հանձնարարականի հիման վրա:

Պայթուցիկ նյութերի 7 պահեստում բացահայտվել է 37 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,84%-ը: Ստուգումներից վեցն իրականացվել է ՀՀ վարչապետի հանձնարարականի և մեկը պետական մարմիններից ստացված գրությունների հիման վրա: Երկու օբյեկտ շահագործվում է առանց թերությունների:

Տրանսպորտային մեկ հիմնարկում բացահայտվել է 2 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,05%-ը:

2022 թվականի ընթացքում իրականացված ստուգումների արդյունքում կազմվել և տրամադրվել է պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման ժամանակացույցը սահմանող 451 կարգադրագիր:



Իրականացվել է 130 վերստուգում, որոնց արդյունքում արձանագրվել է խախտումների քանակի նվազում 51,2%-ով:



Վերստուգումներով հաստատվել է, որ 59 օբյեկտ 45,4 վերացրել են ստուգումներով բացահայտված թերությունները:

Վերստուգումներն ըստ գործունեության ոլորտների ունեն հետևյալ գրաֆիկական պատկերը.



Ստուգումների և վերստուգումների արդյունքում պարզվել է, որ առանց թերությունների շահագործվում է 131 օբյեկտ, դրանք են՝ «ԿԱՅԾ» ՓԲԸ (Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Աշտարակի խճուղի 16 և Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, Տերվիշյան փողոց թիվ 11), «ՇԱՀՈՒՄՅԱՆ-ՎԻՆ» ՍՊԸ, «ՎԱՉԻԿ ՍԱՖԱՐՅԱՆ» Ա/Ձ, «ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՅԱՆՑԵՐ» ՓԲԸ (Արագածոտնի մարզ, Աշնակ համայնք), «ՎԱՆ ՕԻԼ» ՍՊԸ, «ՆՈՐԱՅՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԻՄՈՆԻ» Ա/Ձ, «ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ» Ա/Ձ, «ԷԴ – ՈՐՍ» ՍՊԸ, «ՍՅՈՒԶԱՆՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԳԱԳԻԿԻ» Ա/Ձ, «ԱՐԵԳԱԿ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ, «ԱՐՏԱԿ» Ա/Կ, «ԴԵՆՍ» ՍՊԸ, «ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ» Ա/Ձ, «ՀԳ 11 ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ԷՅ ԸՆԴ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ ԴԵՂԱՏՈՒՆ» ՍՊԸ (Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ռիժկովի փողոց 1/5 և ք. Գյումրի, Սայաթ–Նովա փողոց 2/10), «ԱՎԴՈՅԱՆՆԵՐ» ՍՊԸ, «ԲՐԵՆԴԼԻԴԵՐ Հ/Ձ» ՍՊԸ, «ԷՅ.ԴԻ.ԷՄ. ԴԱՅՄՈՆԴՍ» ՍՊԸ, «ՍԵԳԱՋ» ՍՊԸ, «ԴԱՎԻԹ ՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐԻ» Ա/Ձ, «ԱՐՄԵՆԻԱՆ ՏՈԲԱԿՈ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ, «ԷՅ ԸՆԴ ԷՄ ՌԵՅՐ» ՍՊԸ, «ՔԱԹ ԱՐՏ» ՍՊԸ, «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ, «ԼԻԶԻՆ» ԲԲԸ, «ԼԱՐԳՈ – ՎԻՆՉ» ՍՊԸ, «ԷԴՎԱՐԴ ՂԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆԻ» Ա/Ձ, «ԳԵՎՈՐԳ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՐՇԱԿԻ» Ա/Ձ, «ԱՇՈՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԻ» Ա/Ձ, «ԱՐՏՅՈՄ ԱՎԵՏԻՍՅԱՆ ԷԴՎԱՐԴԻ» Ա/Ձ, «ՕՍԿԱՐ ԷԼԵԿՏՐՈՆԻՔՍ» ՍՊԸ, «ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ (Շիրակի մարզ, ք. Գյումրի, Խրիմյան Հայրիկ փողոց 62), «ԻՄԷՔՍ

ԳՐՈՒՊ» ՍՊԸ (Լոռու մարզ, ք. Վանաձոր, Մյասնիկյան 19բ), «ՄՀԵՐ ԶԱՐԳԱՐՅԱՆ» ՍՊԸ, «ՂԵՎՈՆԴ ՍԱՄՍՈՆՅԱՆ ՌԱԶՄԻԿԻ» Ա/Զ, «ԻՆՈՍԻՄՍ» ՍՊԸ, «ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ» Ա/Զ, «ՄԱՍԻՍ-94» ՍՊԸ, «ԳԱԳԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԱՐԵԳԻՆԻ» Ա/Զ, «ԿԱՐԵՆ ՊԱՐՍԱՄՅԱՆ ԳԵՎՈՐԳԻ» Ա/Զ, «ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐՏԱԿ ՄԽԻԹԱՐԻ» Ա/Զ, «ՎԱՆ ԱՐԴԻ» ՍՊԸ, «ՀՐԱՆՈՒՇ ԵՍԱՅԱՆ ՓԱՇԱՅԻ» Ա/Զ, «ԱՆԱՀԻՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԺՈՐԱՅԻ» Ա/Զ, «ԷՅՉ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ (Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Տ. Մեծի 2/1), «ՇԱՀԷՍ» ՍՊԸ, «ԽԱՉԻԿ ՇԱԲՈՅԱՆ ԱՐԱՄԻ» Ա/Զ, «ՍԱՄՍՈՆ ԵՍԱՅԱՆ ԳԵՎՈՐԳԻ» Ա/Զ, «ՍՈՒՍԱՆՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ ԴՈՒՅՆԱԲԵԿԻ» Ա/Զ, «ՍԼՈԲԵՐ» ՍՊԸ, «ԳԱԶ-ՕԼ» ՍՊԸ, «ԱԶԱՄՅԱՆ ՌԵՍՈՐԹ ՍԵՆԹԸՐ» ՍՊԸ, «ԱԼԵՔՍ ՀՈՈՒՄ» ՍՊԸ, «ԱՍՏԱՖՅԱՆ 1» ՍՊԸ, «ԱՐՄԱՄԱՍՏ» ՍՊԸ, «ՀԵՐՄԻՆԵ ՂԱԶԱԽԵՑՅԱՆ ԳԵՎՈՐԳԻ» Ա/Զ, «ՎԱՀԵ ՂԱԶԱԽԵՑՅԱՆ ՍԱՄՎԵԼԻ» Ա/Զ, «ԿՌԱԳ» ՍՊԸ, «ԱՇՏԱՐԱԿԻ ՊՏՈՒՂ-ԲԱՆԶԱՐԵՂԵՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ԲԲԸ, «ԼԻԼԻԹ ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ» Ա/Զ, «ԱՐՄ-ՀՈՍ» ՍՊԸ, «ԹԱՄԱՐԱ ՖՐՈՒԹ» ՓԲԸ, «ՄԵՂՐԱԶՈՐ ԳՈԼԴ» ՍՊԸ, «ՆԱԻՐԻ ԼԵՆԴ» ՍՊԸ, «ՎԻԲՌԱ ԲԼՈԿ» ՍՊԸ, «ԱՐՄԻՆԵ ԶԱՐԳԱՐՅԱՆ ԴԱՎԻԹԲԵԿԻ» Ա/Զ, «ԳԱՎԱ» ՍՊԸ, «ՄԱՐԵՏԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ» Ա/Զ, «ԹՈՅՍ» ՍՊԸ (Երևան Արշակունյաց 17ա 3Գ, պահեստ), «ՎԵԱԳԱԶ» ՍՊԸ, «ԿԱՐՄԻՐ ԿԱՄՈՒՐՋ» ՍՊԸ, «ԱՐՋԱՂԲՅՈՒՐ» ՍՊԸ, «ՄԱԳԱՍ ԻՆՎԵՍՏ» ՓԲԸ, «ՏԱՎՐ» ՍՊԸ, «ՄՈՒԼՏԻ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ, «ՍՊԻՏԱԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ, «ՎԱՆԱՆԱՎԱԿ» ՍՊԸ, «ՍԵՅՐԱՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ ՎԱՉԱԳԱՆԻ» Ա/Զ, «ՌՈՒԿԱՐ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ՀԱՐԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ԼԵՎ-ՎԱԳ» ՍՊԸ, «ՔԱԶ ՍԱՐԴԱՐԱՊԱՏՑԻ» ՍՊԸ, «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳԱԶՄԱՇ» ՍՊԸ, «ՆՈՒՇ» ՍՊԸ, «ՎԱՐԴԱՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ» Ա/Զ, «ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ, «ՍՊԻՏԱԿԻ ԹՌՉՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՍՊԸ, ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ ԱՂՍՏԵՎ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ» ԱՍ (Տավուշի մարզ, ք. Իջևան Վասիլյան 8), «ՀԻՆ ԶՐՎԵԺ» ՍՊԸ, «Վ.Ն.Ս.-ԵՌՅԱԿ» ՍՊԸ, «ԳԵՏԱՓ» Ա/Կ, «ԷՅԷՅԷՖՓԻՍԻ» ՍՊԸ, «ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ» ՍՊԸ, «ՎԱՆՈՒԼ» ՍՊԸ, «ԵՐԵՎԱՆ ԱՐՏ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ, «ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՄԵԼՔՈՒՄՅԱՆՆԵՐ» ՍՊԸ, «ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀՄԴ, «ԿՐԱԴԱՆ» ՍՊԸ, «ՄՀԵՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆԻ» Ա/Զ, «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ, «ՌՌՌ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ, «ԲԵԼԳԼԱՍ» ՍՊԸ, «ԱՐՄԵՆ-ՀԱՄԻԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ ՀՁ» ՍՊԸ, «ՄԱՅԻՍՅԱՆ ԿԱՄՈՒՐՋ» ԱԿ, «ԱՆԴՐԱՆԻԿ ԱՎԱԳՅԱՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ» Ա/Զ, «ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՄՈՅԻ ՄԵԼԻՔԲԵԿՅԱՆ» Ա/Զ, «ԳԵՎՈՐԳՅԱՆ-ՌԵԶՅԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ, «ԿՈՏԱՅՔ ԳԱՐԵԶՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ, «ՎՈԼՈԴՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱԳԻԿԻ» Ա/Զ, «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊՓԲԸ, «ԱՊԱՌԱԺ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ, «ԼԻՃՔՎԱԶ» ՓԲԸ, «ԱՐՏԱՇԱՏԻ ՊԱՀԱԾՈՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ, «ՀԱՅԿ-ԱՀԱՐՈՆ» ՍՊԸ, «ԴԻԱՆԱ ԻՎՎ» ՍՊԸ, «ՍԻՍ-ԱԼՊ» ՍՊԸ, «ՄՇԵՑԻ ԽՈՐԵՆ» ՍՊԸ, «ՔԱՐԱՐՏ» ՓԲԸ, «ՀՐԱՅՐ ՕՀԱՆՅԱՆ ՀՐԱՆՏԻ» Ա/Զ, «ՄԱՍԻՍ ՏՈԲԱԿՈ» ՍՊԸ (Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, Արտադրական թաղ

13), «ԻՄՊԵՐԻԱԼ-ՏՈՒՐ» ՍՊԸ, «ԳՅՈՒՐՍ» ՍՊԸ, «ՍԻՍ-ԱԼԿՈ» ՍՊԸ, «ԽՈՍՊ» ՍՊԸ, «ԱԲՐԱՀԱՄ ՆԱԴՐՅԱՆ» Ա/Ձ, «ՅՈՒ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ» ՍՊԸ, «ԱՎԵՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՄԲԱՏԻ» Ա/Ձ, «ԼԻԴԵՐ ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ:

2022 թվականի կատարված ստուգումների 72,3%-ը կազմում են տարեկան ծրագրով նախատեսված ստուգումները, 10,8%-ը՝ ոչ պլանային ստուգումները և 16,9%-ը՝ վերստուգումները:

2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 3,97 օր (2021 թվականին՝ 3,48 օր, 2020 թվականին՝ 2,9 օր): Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2,07-ը (2021 թվականին՝ 2,11-ը, 2020 թվականին՝ 2,4-ը):

Ոչ պլանային ստուգումների 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 3,17 օր (2021 թվականին՝ 3,15 օր, 2020 թվականին՝ 2,1 օր): Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 1,89-ը (2021 թվականին՝ 1,80-ը, 2020 թվականին՝ 2,1-ը):

1 վերստուգման միջին տևողությունը կազմել է 1,47 օր (2021 թվականին՝ 1,65 օր, 2020 թվականին՝ 1,6 օր): Յուրաքանչյուր վերստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2.09-ը (2021 թվականին՝ 2,0-ը (2020 թվականին՝ 2,0-ը):

15 ստուգում իրականացվել է գործուղված մասնագետների կողմից, ինչի համար պահանջվել է լրացուցիչ 315.800 դրամ:

Էներգետիկայի և էներգասպառման բնագավառ

2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրով էներգետիկայի և էներգասպառման բնագավառում նախատեսված էր կատարել ստուգումներ 146 տնտեսավարող սուբյեկտների 147 օբյեկտներում: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է նախատեսված ընդհանուր քանակի 78.8%-ը, այն է ավարտվել են 112 տնտեսավարող սուբյեկտներին պատկանող օբյեկտների ստուգումները, 3 ստուգում ընթացքի մեջ է: Նախատեսված 31 սուբյեկտ (21.2%) չի ստուգվել չգործելու, գազամատակարարման դադարեցման, վարձակալության և այլ պատճառով: Միաժամանակ իրականացվել է 45 վերստուգում:

2021 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված էր 128 ստուգում: Տարվա ընթացքում ստուգվել էին 102 տնտեսավարող սուբյեկտի 110 օբյեկտներմ (ընդհանուր քանակի 85.9%), 18-ը չէին ստուգվել չգործելու պատճառով: Միաժամանակ իրականացվել էր 52 վերստուգում:

2020 թվականի տարեկան ծրագրով նախատեսված 227 ստուգումից COVID-19 համավարակով պայմանավորված ստուգվել էր ընդամենը 73 տնտեսավարող սուբյեկտի 102 օբյեկտ (ընդհանուր քանակի 44.9%): Իրականացվել էր 5 վերստուգում:

Վերոնշյալ ստուգումների և վերստուգումների գրաֆիկական պատկերներն ըստ տարիների բերված են ստորև.





2022 թվականին իրականացված ստուգումների արդյունքում արձանագրվել է 2434 խախտում (2021թ.՝ 1579 խախտում, 2020թ.՝ 974 խախտում), որոնք ըստ մարզերի ունեն հետևյալ գրաֆիկական արտացոլումը.



Ստուգումների արդյունքում կազմվել և տնտեսավարող սուբյեկտներին է տրամադրվել պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման ժամանակացույցը սահմանող 111 կարգադրագիր (2021թ.՝ 134 կարգադրագիր, 2020թ.՝ 94)։ Առանց թերությունների է գործվում 4 սուբյեկտ (2021թ.՝ 2, 2020թ.՝ 8)։

2020-2022 թվականների ընթացքում տրված կարգադրագրերն ունեն հետևյալ գրաֆիկական պատկերները.



2022 թվականին իրականացված 45 վերստուգումների արդյունքում 16 օբյեկտներում թերություններն ամբողջովին վերացվել են (2021թ.՝ 52 վերստուգում, որից 26-ում առանց խախտումների, 2020թ.՝ 5 վերստուգում, որից 3-ն առանց խախտումների):

2022 թվականի վերստուգումների արդյունքում պարզվել է, որ նախորդ ստուգումների ընթացքում արձանագրված 651 խախտումից 219-ը տնտեսավարող սուբյեկտների կողմից վերացվել են, այսինքն՝ խախտումները նվազել են 33.6%-ով:



Ստուգումների ընթացքում տնտեսավարող սուբյեկտների 123 օբյեկտներում (կամ դրանց մասնաճյուղերում) բացահայտվել է 504 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր 2434 խախտումների՝ 20.7%-ը (2021թ.՝ 2021թ.՝ 102 օբյեկտ և 562 խախտում, այն ընդհանուր 1579 խախտումների 35.6%-ն է, 2020թ.՝ 95 օբյեկտ և 434 խախտում, կամ ընդհանուր 974 խախտումների՝ 44.5%-ը):

Հիմնական խախտումները վերաբերում են.

- ✓ *գազի տնտեսության շահագործման, սպասարկման և վերանորոգման հատուկ հրահանգների առկայությանը - 77 դեպք (2021թ.՝59 դեպք, 2020թ.՝30 դեպք),*
- ✓ *կազմակերպության գազի տնտեսությունները շահագործող ինժեներատեխնիկական անձնակազմի (ԻՏԱ), գազավտանգավոր աշխատանքներ իրականացնող ԻՏԱ, գազամատակարարման օբյեկտների շինարարությունն իրականացնող շինմոնտաժային կազմակերպությունների ԻՏԱ գիտելիքների ստուգման կազմակերպմանը – 53 դեպք (2021թ.՝58 դեպք, 2020թ.՝43 դեպք),*

- ✓ *գազատար խողովակների համապատասխանությանը ազգային ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին – 35 դեպք (2021թ.՝49 դեպք, 2020թ.՝25 դեպք),*

Վերստուգվել է (ըստ գործունեության բնագավառի) 38 օբյեկտ, որի արդյունքում տնտեսավարող սուբյեկտներում խախտումների քանակը նվազել է 36.9%-ով (2021թ.՝ 50 օբյեկտ, արդյունքում նվազել է 64.7%-ով, 2020թ.՝ 5 օբյեկտ, արդյունքում նվազել է 76.2%-ով)։

Գազաբաշխման և գազասպառման միջին և բարձր ճնշման 110 էներգատեղակայանքներում (2021թ.՝ 97 էներգատեղակայանք, 2020թ.՝ 51 էներգատեղակայանք) բացահայտվել է 875 խախտում (2021թ.՝ 821 խախտում, 2020թ.՝ 435 խախտում), ինչը կազմում է բացահայտված բոլոր 2434 խախտումների՝ 17.9%-ը (2021թ.՝ ընդհանուր 1579 խախտումների՝ 52%-ը, 2020թ.՝ ընդհանուր 974 խախտումների՝ 44.7%-ը)։

Հիմնական խախտումներն են.

- ✓ *գազատարների տեխնիկական սպասարկման աշխատանքների հրդեհային անվտանգության հրահանգների բացակայությունը – 86 դեպք (2021թ.՝59 դեպք, 2020թ.՝ 32 դեպք),*
- ✓ *գազատարների տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման անվտանգ մեթոդների հրահանգների բացակայությունը – 81 դեպք (2021թ.՝59 դեպք, 2020թ.՝34 դեպք),*
- ✓ *գազատարի տեխնիկական շահագործման՝ շրջայցային կամ տեխնիկական սպասարկման չկատարելը - 79 դեպք (2021թ.՝69 դեպք, 2020թ.՝32 դեպք):*

Վերստուգվել է (ըստ գործունեության բնագավառի) 38 էներգատեղակայանք, որի արդյունքում կատարված խախտումների քանակը նվազել է 29.2%-ով (2021թ.՝ 28 օբյեկտ, արդյունքում նվազել է 46.4%-ով, 2020թ.՝ 2 օբյեկտ, արդյունքում նվազել է 75%-ով)։

Գազափոխադրման բարձր ճնշման 11 սուբյեկտում ստուգման ընթացքում բացահայտվել է 211 խախտում, այն խախտումների ընդհանուր թվի՝ 2434 8.7% է կազմում (2021թ.՝ 1 սուբյեկտ 2 խախտումով, որը ընդհանուր 1579 խախտումների՝ 0.1% է, 2020թ.՝ 2 սուբյեկտ 5 խախտումով, որը ընդհանուր 974 խախտումների՝ 0.5% է)։

110 կվ և բարձր լարման էլեկտրատեղակայանքներում՝ էլեկտրահաղորդման օդային գծերի 66 ստուգումների ընթացքում բացահայտվել է 361 խախտում, այսինքն՝ բացահայտված բոլոր 2434 խախտումների 14.8%-ը (2021թ.՝ 4 ստուգում 65 խախտումով, որը ընդհանուր 1579 խախտումների՝ 4.1% է, 2020թ.՝ 3 ստուգում 26 խախտումով, որը ընդհանուր 974 խախտումների՝ 2.7% է)։

Հիմնական խախտումներն են.

- ✓ *ՕԳ-ի հողակցող հաղորդիչները պահպանված չեն կոռոզիայից, բաց տեղադրած հողակցող հաղորդիչները չունեն սև ներկվածք - 52 դեպք,*
- ✓ *ՕԳ-ի հենարանների մեկուսացման ինտենսիվ աղտոտման գոտիներում թռչուններին խրտնեցնող և վրածածկումը բացառող հատուկ սարքվածքների բացակայությունը - 40 դեպք,*
- ✓ *ՕԳ-ի ուղեգծի տարածքի բնահողի հաղորդականության մասին տվյալների բացակայությունը - 39 դեպք։*

110կվ և բարձր լարման էլեկտրատեղակայանքի՝ <u>ենթակայանի և բաշխիչ սարքվածքի</u> 56 ստուգումների արդյունքում բացահայտվել է 483 խախտում, որն էլ կազմում է խախտումների ընդհանուր քանակի 19.8%-ը (2021թ.՝ 13 էլեկտրատեղակայանք և 129 խախտում, որը ընդհանուր քանակի 8.2%-ն է, 2020թ.՝ 8 էլեկտրատեղակայանք և 74 խախտում, որը ընդհանուր քանակի 7.6%-ն է)։

Արձանագրած հիմնական խախտումներն են.

- ✓ *բաշխիչ սարքի տարածքի բնահողի հաղորդականության մասին տվյալների բացակայությունը – 43 խախտում (2021թ.՝9, 2020թ.՝6),*
- ✓ *հողակցող սարքվածքների տեղակայումից, վերակառուցումից և հիմնական նորոգումից հետո, ոչ պակաս, քան 6 տարին մեկ, չեն կատարվում հսման լարումների չափումներ - 40 խախտում,*
- ✓ *բաշխիչ և ցածրավոլտ լրակազմ սարքերի բոլոր մետաղական մասերում հակաքայքայիչ ծածկույթի բացակայությունը - 34 խախտում (2020թ.՝4):*

Վերստուգվել է (ըստ գործունեության բնագավառի) 3 էներգատեղակայանք, որի արդյունքում կատարված խախտումների քանակը նվազել է 89.5%-ով։

2022 թվականին (ըստ գործունեության բնագավառի) իրականացված ստուգումների ժամանակ բացահայտված խախտումների գրաֆիկական պատկերները բերված է ստորև.



2022 թվականին իրականացված վերստուգումներից առաջ և հետո խախտումների քանակի համեմատական գրաֆիկական պատկերներն՝ ըստ գործունեության բնագավառի, բերված են ստորև.



2022 թվականին իրականացված ստուգումների 78,2%-ը կազմում են պլանային ստուգումները, իսկ 21,8%-ը՝ վերստուգումները:

2022 թվականին իրականացված **1 ստուգման** միջին տևողությունը կազմել է 3 օր: Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցում 2,2-ը (2021թ.՝ 6,2 օր և 2,2 մարդ, 2020թ.՝ 3,7 օր և 2 մարդ):

2022 թվականին իրականացված **1 վերստուգման** միջին տևողությունը կազմել է 1,7 օր: Յուրաքանչյուր վերստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 1,8-

ը (2021թ.՝ 2,4 օր և 3,2 մարդ, 2020թ.՝ 1,2 օր և 2 մարդ)։ Տեսչական մարմնի կողմից իրականացված բոլոր ստուգումները նախատեսված էին տարեկան ծրագրով։

41 ստուգում իրականացվել է գործուղված մասնագետների կողմից, ինչի համար պահանջվել է լրացուցիչ 861.500 դրամ։

Տրանսպորտի բնագավառ

Տեսչական մարմնի 2022 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված էր կատարել 29 ստուգում կանոնավոր ուղևորափոխադրումների բնագավառում։ Արդյունքում իրականացվել է 21 ստուգում, ինչը կազմում է նախատեսվածի 72,4%-ը։ 8 ստուգում չի իրականացվել, քանի որ 7 կազմակերպություն դադարեցրել են գործունեությունը, իսկ մեկի տնօրենը բացակայել է հանրապետությունից։ 2021 թվականին 34 նախատեսված ստուգումներից ավարտվել էին 22-ը (նախատեսված քանակի 64,7%-ը)։ 2020 թվականին, պայմանավորված հայտարարված արտակարգ դրությամբ, 30 նախատեսված ստուգումներից ավարտվել էին 16-ը (նախատեսված քանակի 53,3%-ը)։

Ստուգումների ընթացքում բացահայտվել է 91 (2021թ.՝ 77, 2020թ.՝ 63) խախտում, որոնցից առավել կրկնվողներն են.

- ✓ *հավաքակայնում առկա չէ տրանսպորտային միջոցների նախաուղերթային տեխնիկական զննման՝ նախատեսված երկարության դիտափոսը (էստակադան) – 6 տնտեսավարող սուբյեկտի մոտ,*
- ✓ *փոխադրումներ իրականացնողի տրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործումը չի իրականացվում համապատասխան պարբերականությամբ և սահմանված ժամկետներում տեխնիկական զննության անցկացման պայմաններում – 6 տնտեսավարող սուբյեկտի մոտ։*
- ✓ *հավաքակայնանում չի իրականացվում տրանսպորտային միջոցների վարորդներ նախաուղերթային բժշկական զննումը (առողջական վիճակի ամենօրյա զննումը)- 5 տնտեսավարող սուբյեկտի մոտ։*

Ստուգումների արդյունքում 11 տնտեսավարող սուբյեկտներին տրվել են կարգադրագրեր (2021թ.՝ 19, 2020թ.՝ 15), 10 տնտեսավարող սուբյեկտ (ստուգված օբյեկտների 47.6%) գործում է առանց խախտումների (2021թ.՝ 3, 2020թ.՝ 1)։

2022 թվականին կանոնավոր ուղևորափոխադրումների բնագավառում իրականացվել է 8 վերստուգում (2021թ.՝ 22, 2020թ.՝ 1), որոնց արդյունքում 3 տնտեսավարող սուբյեկտների ղեկավարներին տրվել են տեղեկանքներ թերությունների բացակայության վերաբերյալ։ Վերստուգումների արդյունքում վերացվել է ընդհանուր առմամբ 19 խախտում։

ՀՀ վարչապետի հանձնարարականով հանձնարարված էր 2022 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում ստուգել տեխնիկական զննության 15 կայան։ Իրականացված 14

ստուգումների արդյունքում 4 կայաններում հայտնաբերվել է 7 խախտում, իսկ մյուս 10 կայաններում խախտումներ չեն արձանագրվել: 1 ստուգում չի իրականացվել, քանի որ նշված հասցեում գործել է այլ կազմակերպություն: Խախտումներ հայտնաբերված 4 կայաններում իրականացվել են վերստուգումներ, որոնց արդյունքում 1 կայանի տրվել է տեղեկանք՝ խախտումների բացակայության վերաբերյալ: Վերստուգումների արդյունքում վերացվել է ընդհանուր առմամբ 4 խախտում (արձանագրված խախտումների 57%):

ՀՀ վարչապետի հանձնարարականով հանձնարարված էր 2022 թվականի 4-րդ եռամսյակում ստուգել գազով աշխատելու համար տրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազաբալոնների փորձարկման 19 կայանում: Իրականացված 17 ստուգումների արդյունքում խախտումներ չեն արձանագրվել, տնտեսավարողներին տրվել են տեղեկանքներ: 2 ստուգում ընթացքի մեջ է:

2022 թվականին իրականացված ստուգումների 31,8%-ը կազմում են պլանային ստուգումները, 50%-ը՝ ոչ պլանային, իսկ 18,2%-ը՝ վերստուգումները:



1 պլանային ստուգման միջին տևողությունը կազմել է 2,7 օր (2021թ.՝ 3,9, 2020թ.՝ 5,4), այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2-ը (2021թ.՝ 2,1, 2020թ.՝ 2,9):

1 ոչ պլանային ստուգման միջին տևողությունը կազմել է 2,3 օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2-ը:

1 վերստուգման միջին տևողությունը կազմել է 1,9 օր (2021թ.՝ 2,1, 2020թ.՝ 2,1), այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր վերստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 1,7-ը (2021թ.՝ 2,1, 2020թ.՝ 2,3):

Քաղաքաշինության բնագավառ

Քաղաքաշինության բնագավառում 2022 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված 654 ստուգումներից իրականացվել է 366-ը, ինչը կազմում է նախատեսված ընդհանուր քանակի 56%-ը (2021 թվականի նախատեսված 757 ստուգումներից իրականացվել է 439-ը՝ 58%-ը, իսկ 2020 թվականի ընթացքում 385-ից իրականացվել է 64 ստուգում՝ 17%): 288 օբյեկտ չի ստուգվել՝ շինարարական

աշխատանքների բացակայության (107 օբյեկտ), ավարտական ակտի և այն ստանալու դիմումի (104 օբյեկտ), սեփականաշնորհման վկայականի առկայության (13 օբյեկտ), դրական եզրակացության (4 օբյեկտ), քննչական մարմիններում գտնվելու (1 օբյեկտ): Կրկնակի տրամադրված շինարարական թույլտվությունների պատճառով Ստուգումների տարեկան ծրագրում 12 հասցե կրկնվում է: 47 ստուգում ընթացքի մեջ է:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 87 ոչ պլանային ստուգում, որից 51-ը սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում: Ոչ պլանային ստուգումներն իրականացվել են Երևանում՝ 18, Շիրակում՝ 11, որից 10-ը սուբվենցիոն ծրագրի շրջանակներում իրականացվող օբյեկտում, Լոռում՝ 9, որից 5-ը՝ սուբվենցիոն, Գեղարքունիքում՝ 8, որից 8-ը՝ սուբվենցիոն, Արագածոտնում՝ 6, որից 6-ը՝ սուբվենցիոն, Տավուշում՝ 4, որից 4-ը՝ սուբվենցիոն, Վայոց ձորում՝ 4, որից 1-ը՝ սուբվենցիոն, Կոտայքում՝ 10, որից 4-ը՝ սուբվենցիոն, Սյունիքում՝ 9, որից 6-ը՝ սուբվենցիոն, Արարատում՝ 5, որից 4-ը՝ սուբվենցիոն, Արմավիրում՝ 3, որից 3-ը՝ սուբվենցիոն (2021 թվականի նույն ժամանակահատվածում՝ 65 ստուգում):



	Երևան	Շիրակ	Լոռի	Գեղարքունիք	Կոտայք	Արագածոտն	Սյունիք	Տավուշ	Արարատ	Վայոց Ձոր	Արմավիր
սուբվենցիոն ծրագրով		10	5	8	4	6	6	4	4	1	3
այլ մարմիններից ստացված գրություններով	8	1	2		2		3			3	
քաղաքացիներից ստացված բողոքներով	10		2		4				1		

Իրականացվել է 12 վերստուգում, որի արդյունքում պարզվել է, որ 4 օբյեկտում 20 խախտումները վերացվել են, իսկ 2 օբյեկտում 28 խախտումներից վերացվել են 15-ը:



Ընդհանուր առմամբ, իրականացվել է 465 ստուգում/վերստուգում, որից 157-ը (34%) Երևանում, 54-ը (11.6%)՝ Սյունիքի, 37-ը (8%)՝ Լոռու, 36-ը (7.8%)՝ Կոտայքի, 35-ը (7.5%)՝ Շիրակի, 33-ը (7%)՝ Արմավիրի, 31-ը (6.6%)՝ Արարատի, 26-ը (5.5%)՝ Արագածոտնի, 25-ը (5.3%)՝ Գեղարքունիքի, 22-ը (4.7%)՝ Տավուշի և 9-ը (2%)՝ Վայոց Ձորի մարզերում:



Ստուգումների արդյունքում արձանագրվել է 1767 խախտում (2021 թվականի ընթացքում արձանագրվել էր 1645 խախտում, իսկ 2020 թվականին՝ 438 խախտում), որոնք ըստ մարզերի ունեն հետևյալ գրաֆիկական արտացոլումը.



2020-2022 թվականների ընթացքում իրականացված ստուգումների և դրանց արդյունքում արձանագրված խախտումների բաշխվածությունն ունի հետյան պատկերը.



Հիմնական խախտումները վերաբերում են.

➢ <u>շինարարություն իրականացնող</u> տնտեսավարող սուբյեկտների (կապալառու) մոտ հայտնաբերվել է 685 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 38,76%-ը (2021թ. նույն ժամանակահատվածում՝ 619 խախտում): Առավել կրկնվող խախտումներն են.

✓ *շինարարությունը չի իրականացվում համաձայնեցված նախագծին համապատասխան՝ 191 դեպք,*

- ✓ *շինարարության վարման մատյանում բացակայում են կապալառուի կողմից կատարված համապատասխան նշումներ՝ 87 դեպք,*
- ✓ *բացակայում է բետոնի փորձարկման ակտը՝ 81 դեպք,*
- ✓ *շինարարական աշխատանքների ընդհանուր մատյանը չի լրացվում՝ 79 դեպք,*
- ✓ *բացակայում են կապալառուի կողմից լրացված և ստորագրված ծածկված աշխատանքների ակտերը՝ 76 դեպք.*

➢ շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 367 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 20,76%-ը (2021թ. նույն ժամանակահատվածում՝ 402 խախտում)։ Առավել կրկնվող խախտումներն են.

- ✓ *շինարարության վարման մատյանում բացակայում են շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնողի համապատասխան նշումները՝ 128 դեպք,*
- ✓ *տեխնիկական հսկողություն իրականացնողի կողմից շինարարության վարման մատյանը չի լրացվում՝ 76 դեպք,*
- ✓ *շինարարության որակի տեխնիկական հսկողի կողմից ծածկված աշխատանքների ակտերը չեն ստորագրվում՝ 71 դեպք.*

➢ շինարարության նկատմամբ հեղինակային հսկողություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 264 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 14,9%-ը (2021թ. նույն ժամանակահատվածում՝ 203 խախտում)։ Առավել կրկնվող խախտումներն են.

- ✓ *շինարարության վարման մատյանում բացակայում են հեղինակային հսկողություն իրականացնողի համապատասխան նշումները՝ 127 դեպք,*
- ✓ *հեղինակային հսկողություն իրականացնողի կողմից չի լրացվել շինարարության վարման մատյանը՝ 77 դեպք,*
- ✓ *բացակայում են հեղինակային հսկողի կողմից լրացված և ստորագրված ծածկված աշխատանքների ակտերը՝ 60 դեպք.*

➢ համայնքի ղեկավարի կողմից իրականացվող քաղաքաշինական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 274 խախտում, որը կազմում է ընդհանուր խախտումների 15,5%-ը (2021թ. նույն ժամանակահատվածում՝ 215 խախտում).

➢ <u>կառուցապատողների</u> մոտ հայտնաբերվել է 161 խախտում՝ ընդհանուր խախտումների 9,1%-ը (2021թ. նույն ժամանակահատվածում՝ 98 խախտում): Առավել կրկնվող խախտումներն են.

- ✓ *տեղեկանքում նշված չէ շինարարության տեխնիկական հսկողությունն իրականացնող կազմակերպության անվանումը և լիցենզիայի համարը՝ 29 դեպք,*
- ✓ *տեղեկանքում նշված չէ շինարարական աշխատանքների կապալառուի անվանումը և լիցենզիայի համարը՝ 28 դեպք,*
- ✓ *կառուցապատողը չի ապահովել շինարարության տեխնիկական հսկողության իրականացումը համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպության միջոցով՝ 26 դեպք.*

➢ <u>փորձաքննություն իրականացնող</u> տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 15 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 0,82%-ը (2021թ. նույն ժամանակահատվածում՝ 7 խախտում),

➢ <u>ճարտարապետաշինարարական նախագիծ մշակող կազմակերպության</u> գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 1 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 0,06%-ը (2021թ.՝ 6 խախտում):

Խախտումների բացակայության վերաբերյալ տրվել է 223 տեղեկանք (2021 թվականի ընթացքում՝ 244 տեղեկանք, իսկ 2020 թվականի ընթացքում՝ 20), հայտնաբերվել է խախտումներով կառուցվող 242 օբյեկտ (2021 թվականի ընթացքում՝ 195, իսկ 2020 թվականի ընթացքում՝ 44):



Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների 78,7% կազմում են պլանային ստուգումները, 18,7%՝ ոչ պլանային, իսկ 2,6%՝ վերստուգումները։

1 պլանային ստուգման միջին տևողությունը կազմել է 4,81 օր, ոչ պլանային ստուգման դեպքում՝ 2,49 օր, վերստուգման դեպքում՝ 1,58 օր։ Յուրաքանչյուր պլանային ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2,03, ոչ պլանային ստուգման համար՝ 1,97, իսկ վերստուգման համար՝ 1,67։ 25 ստուգում իրականացվել է գործուղված մասնագետների կողմից, ինչի համար պահանջվել է լրացուցիչ 1.168.400 դրամ։

2021 թվականի տարեկան ծրագրով իրականացված 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 6,98 օր, ոչ պլանային ստուգման միջին տևողությունը կազմել է 1,6 օր, յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2,01-ը, ոչ պլանային ստուգման՝ 1.94-ը, այն չի պահանջվել լրացուցիչ ֆինանսական ծախսեր։ 2020 թվականի 1 ստուգման միջին տևողությունը կազմել էր 5.52 օր, այն չէր պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր։ Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 1.92-ը։

Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառ

2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված էին ստուգումներ ՀՀ 11 մարզերում, որոնցից իրականացվել են 10-ը՝ 90,9% (ընդհանուր ստուգումների 35,71%-ը)։ Սյունիքի մարզում նախատեսված ստուգումը ստեղծված իրավիճակով պայմանավորված հնարավոր չի եղել իրականացնել։ Իրականացվել է նաև 18 ոչ պլանային ստուգում, որոնցից 2-ը ՀՀ վարչապետի հանձնարարությամբ, 16-ը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, ինչպես նաև հանրությունից ստացված բողոքների հիման վրա։

2021 թվականի տարեկան ծրագրով նախատեսված էր իրականացնել 10 ստուգում, որոնք իրականացվել են ամբողջ ծավալով (ընդհանուր ստուգումների 37,04%-ը)։ Իրականացվել էր 17 ոչ պլանային ստուգում, որոնցից 4-ը ՀՀ վարչապետի հանձնարարությամբ, 13-ը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, ինչպես նաև հանրությունից ստացված բողոքների հիման վրա։

2020 թվականի նույն ժամանակահատվածում նախատեսված 10 ստուգումներից իրականացվել էր 2 ստուգում՝ 20%, ինչը պայմանավորված էր հանրապետությունում ստեղծված իրավիճակով։ Իրականացվել էր 14 ոչ պլանային ստուգում, որոնցից 1-ը ՀՀ վարչապետի հանձնարարությամբ, 13-ը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, ինչպես նաև հանրությունից ստացված բողոքների հիման վրա։



242 խախտումներից 31-ը (12,8%) արձանագրվել է Երևանում, 50-ը (20,7%)՝ Արարատի, 16-ը (6,6%)՝ Արմավիրի, 6-ը (2,5%)՝ Արագածոտնի, 30-ը (12,4%)՝ Կոտայքի, 17-ը (7%)՝ Վայոց Ձորի, 1-ը (0,4%)՝ Սյունիքի, 24-ը (9,9%)՝ Շիրակի, 35-ը (14,5%)՝ Լոռու, 21-ը (8,7%)՝ Գեղարքունիքի և 11-ը(4,5%)՝ Տավուշի մարզերում:

Ստուգումների արդյունքում արձանագրված 242 խախտումներից 211-ը (ընդհանուր քանակի 87,45%) բացահայտվել է Տարեկան ծրագրի շրջանակներում իրականացված ստուգումների ժամանակ:

	ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՔԱՆԱԿ	ՏՈԿՈՍ
1	Երևանի Կենտրոն վարչական տարածք	31	15%
2	Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք	6	3%
3	Արարատ մարզի Արարատ համայնք	36	17%
4	Արմավիրի մարզի Արաքս համայնք	16	8%
5	Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք	21	10%
6	Լոռու մարզի Գյուլագարակ համայնք	28	13%
7	Կոտայքի մարզի Չարենցավան համայնք	26	12%
8	Շիրակի մարզի Արթիկ համայնք	20	9%
9	Վայոց ձորի մարզի Արենի համայնք	17	8%
10	Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք	10	5%

2021 թվականի իրականացված ստուգումների արդյունքում արձանագրվել է 851 խախտում, որոնցից 637-ը՝ Տարեկան ծրագրով: 2020 թվականի իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերվել էր 217 խախտում, որոնցից 146-ը՝ Տարեկան ծրագրով:



Խախտումները հիմնականում վերաբերում են հողամասի նպատակային և գործառնական նշանակությանների հետ առնչվող հարցերին: Բոլոր ստուգված համայնքներում իրականացվել են խորհրդատվական և բացատրական աշխատանքներ: Բացահայտված խախտումների վերաբերյալ 26 տեղեկատվություն ներկայացվել է իրավասու մարմիններին: 2021 թվականին իրավասու մարմիններին է ներկայացվել 23 տեղեկատվություն, իսկ 2020 թվականին՝ 4:

Տարեկան ծրագրով իրականացված ստուգումները կազմում են 2022 թվականին իրականացված ստուգումների 35,7%-ը, իսկ ոչ պլանային ստուգումները՝ 64,3%-ը: Տարեկան ծրագրով նախատեսված 1 ստուգման տևողությունը կազմել է 8,8 օր, ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը՝ 2,6: Ոչ պլանային ստուգումների միջին տևողությունը կազմում է 3,28 օր, մարդկային ռեսուրսը՝ 1,89: 17 ստուգում իրականացվել է գործուղված մասնագետների կողմից, ինչի համար պահանջվել է լրացուցիչ 3.442.300 դրամ:

2021 թվականին Տարեկան ծրագրով 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 9,3 օր, իսկ ոչ պլանային ստուգմանը՝ 3,6 օր: Տարեկան ծրագրով յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցում 2.8-ը, իսկ ոչ պլանային ստուգման համար՝ 2-ը: 2020 թվականին Տարեկան ծրագրով 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 10 օր, իսկ ոչ պլանային ստուգմանը՝ 1,8 օր: Տարեկան ծրագրով յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 3-ը, իսկ ըստ անհրաժեշտության ստուգման համար՝ 2,5-ը:

3. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառ

Տեսչական մարմնի կողմից հաշվառվել և վերլուծվել է ՀՀ-ում 2022 թվականի ընթացքում արձանագրված 5428 հրդեհի դեպք (2021 թվականին՝ 6290 հրդեհ, 2020 թվականին ՝ 6377 հրդեհ), 269-ի դեպքում կազմվել են հրդեհի մասին ակտեր (2021 թվականին՝ 886, 2020 թվականին՝ 1012):



2022 թվականին տեղի ունեցած հրդեհներից զոհվել է 25 (18-ը բնակելի տարածքում, 5-ը՝ ավտոմեքենաներում, 1-ը՝ բաց տարածքում, 1-ը՝ վարչահասարակական շենքում), իսկ վնասվածքներ է ստացել 93 մարդ, որոնցից 32-ը՝ բնակելի տարածքում, 28-ը՝ մարդատար և բեռնատար մեքենաների հրդեհների հետևանքով, 15-ը՝ առևտրի, հասարակական սննդի և սպասարկման օբյեկտներում, 7-ը՝ վարչահասարակական շենքում, 3-ը՝ բաց տարածքներում, 8-ը՝ այլ վայրերում:

Ստորև բերվում է 2022, 2021 և 2020 թվականների հրդեհի զոհերի և վնասվածք ստացածների համեմատական գրաֆիկը.





2022 թվականի հրդեհների 32% արձանագրվել է Երևան քաղաքում, ըստ մարզերի հրդեհներն ունեն հետևյալ բաշխվածությունը.



Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 696 **<u>հրդեհատեխնիկական հետազոտություն</u>** (2021 թվականին՝ 672 ՀՏՀ, 2020 թվականին ՝ 333 ՀՏՀ):



2022 թվականի փետրվարի 2-ի ՏՄ ղեկավարի տեղակալի թիվ ՀՆՁ/09.1/26-2022 հանձնարարականով կատարվել են ՔՏՀԱՏՄ 2022 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված հրդեհատեխնիկական հետազոտություններ բժշկական սպասարկում իրականացնող 338 **առողջապահական օբյեկտներում**: Հետազոտված օբյեկտները և այդտեղ բացահայտված խախտումներն ըստ մարզերի ունեն հետևյալ պատկերը.



Հրդեհատեխնիկական հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ առանց թերությունների շահագործվում է 10 առողջապահական օբյեկտ, դրանք են՝

- «ԱՊԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ,
- «ԱՐԱՐԱՏԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ,
- «ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ,
- «ԱԼԱՎԵՐԴՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ,
- «ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ,
- «ԱԿՈՒՆՔԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ,

- «ԱԲՈՎՅԱՆԻ ԾՆՆԴԱՏՈՒՆ» ՊՓԲԸ,
- «ՀՀ ԱՆ ԹՈՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ,
- «ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ,
- «ՀՌԻՓՍԻՄԵ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊՈԱԿ:

Հետազոտությունների արդյունքում 328 բուժ. հաստատություններում բացահայտվել են տարաբնույթ խախտումներ: Ընդհանուր առմամբ, արձանագրվել է 2019 խախտում, որոնցից առավել կրկնվողներն են.

✓ հիվանդանոցները, պոլիկլինիկաները, ամբուլատորիաները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով - 281 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 14%-ը,

✓ հակահրդեհային ինքնաշխատ համակարգից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 255 խախտում՝ 13%-ը,

✓ արտաքին հրդեհաշիջման համար օբյեկտների տարածքում կամ դրանց մոտակայքում (200մ շառավղով) նախատեսված չէ առնվազն 1 հրշեջ հիդրանտ կամ նվազագույնը 50 մ քառ. տարողությամբ հակահրդեհային ջրավազան - 226 խախտում՝ 11%-ը,

✓ շինարարական հիմնատարրերը մշակված (տոգորված) չեն հրապաշտպան լուծույթով կամ պատվածքով և չեն գտնվում մշակման (տոգորման) ներգործության ժամկետների մեջ - 195 խախտում՝ 10%-ը,

✓ օբյեկտն ապահովված չէ հրդեհաշիջման սկզբնական միջոցներով – 180 խախտում՝ 9%-ը,

✓ հակահրդեհային ինքնաշխատ համակարգը չի գտնվում սարքին վիճակում – 145 խախտում՝ 7%-ը,

✓ 15 մարդուց ավելի միաժամանակյա ներկայությամբ սենքերի դռները չեն բացվում դեպի դուրս, բացի Ա և Բ կարգի սենքերից - 120 խախտում՝ 6%-ը:

2022 թվականի մարտի 29-ի թիվ ՀՆՁ/09.1/48-2022 հանձնարարականով Երևան քաղաքում գործող 20 **բենզալցակայաններում** կատարվել են հրդեհատեխնիկական հետազոտություններ: Հետազոտությունների արդյունքում բացահայտվել են տարաբնույթ խախտումներ: Ընդհանուր առմամբ, արձանագրվել է 111 խախտում, այդ թվում՝

✓ հեղուկ վառելիքի ստորգետնյա տարողություններով բենզալցակայանից մինչև այլ շենքերի և շինությունների միջև պահանջվող միջտարածությունները պահպանված չեն,

✓ արտաքին հրդեհաշիջումն ապահովված է տարողություններից 40 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա գտնվող ոչ պակաս 2 հրշեջ հիդրանտների կամ ոչ պակաս 100 մ^3 տարողությամբ հակահրդեհային ջրավազանի միջոցով,

- ✓ շինությունների էլեկտրական սարքավորումները համալրված չեն հողանցման համակարգով,
- ✓ բենզալցակայանի տարածքն ապահովված չէ շանթարգելման համակարգով,
- ✓ հրդեհավտանգ հիմնատարրերով տանիքների վրայով անցկացված են օդային էլեկտրահաղորդման գծեր և արտաքին էլեկտրագծեր:

2022 թվականի մայիսի 18-ի թիվ ՀՆԶ/04.1/83-2022 հանձնարարականով **189 նախակրթական հաստատություններում** կատարվել են ՔՏՀԱՏՄ 2022 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված հրդեհատեխնիկական հետազոտություններ:

Ըստ մարզերի հետազոտված օբյեկտներն և դրանցում բացահայտված խախտումներն ունեն հետևյալ պատկերը.



Հրդեհատեխնիկական հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ առանց թերությունների շահագործվում է 1 նախակրթարան, այն է՝ «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՌԻՆԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-ը:

Հետազոտությունների արդյունքում **188** նախակրթական հաստատություններում բացահայտվել են տարաբնույթ խախտումներ: Ընդհանուր առմամբ, արձանագրվել է **1337** խախտում, որոնք հիմնականում վերաբերում են.

✓ հակահրդեհային ինքնաշխատ համակարգից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին - 155 խախտում՝ 11,6%-ը,

✓ արտաքին հրդեհաշիջման համար օբյեկտների տարածքում կամ դրանց մոտակայքում (200մ շառավղով) նախատեսված չէ առնվազն 1 հրշեջ հիդրանտ կամ նվազագույնը 50 խ.մ տարողությամբ հակահրդեհային ջրավազան – 148 խախտում՝ 11,1%-ը,

✓ մանկական նախադպրոցական հիմնարկը սարքավորված չէ հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով - 147 խախտում՝ 11%-ը,

✓ շինարարական հիմնատարրերը մշակված (տոգորված) չեն հրապաշտպան լուծույթով կամ պատվածքով և չեն գտնվում մշակման (տոգորման) ներգործության ժամկետների մեջ - 127 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 9.5%-ը,

✓ հակահրդեհային ինքնաշխատ համակարգը չի գտնվում սարքին վիճակում - 122 խախտում՝ 9,1%-ը:

Հաստատությունների տնօրեններին տրամադրվել է մասնագիտական խորհրդատվություն և տրվել են բանավոր ցուցումներ՝ բացահայտված խախտումների վերացման ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու համար:

Տեսչական մարմնի կողմից ուսումնասիրվել և տրամադրվել է 889 **եզրակացություն** (2021 թվականին՝ 681, 2020 թվականին՝ 493) նախագծային փաստաթղթերի հակահրդեհային պահանջների համապատասխանելիության վերաբերյալ:



Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են ավարտված շինարարական 829 օբյեկտների (2021 թվականին՝ 761, 2020-ին՝ 672) **շահագործման ընդունող հանձնաժողովների** աշխատանքներին: Արդյունքում տրվել է 651 դրական և 178 բացասական եզրակացություն:

Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են **հրդեհի ազդանշանի ինքնաշխատ** 63 համակարգի փորձարկման աշխատանքներին (2021 թվականին՝ 7, 2020-ին՝ 19):

Էներգետիկայի և էներգասպառման բնագավառ

ՀՀ տարածքում տեղակայված 6 կՎ և բարձր լարման էլեկտրաէներգետիկական և միջին ու բարձր ճնշման գազամատակարարման համակարգերում՝ տնտեսվարող սուբյեկտների դիմումների հիման վրա, նոր կառուցված և վերակառուցված էներգատեղակայանքներում 2022 թվականին իրականացվել է 1698 տեխնիկական ստուգում, որից 1049-ը՝ (61.8%) էլեկտրաէներգետիկական և 649-ը՝ (38.2%) գազամատակարարման համակարգերում

(2021թ.՝ 1678 տեխնիկական ստուգում, համապատասխանաբար՝ 912 (54.4%) և 766 (45.6%), և 2020թ.՝ 1257 տեխնիկական ստուգում, համապատասխանաբար՝ 655 (52.1%) և 602 (47.9%)):



Արդյունքում տրվել է 1348 գործարկման եզրակացություն, իսկ թվով 350 տեղակայանքների գործարկումներ՝ նախագծի և տեխնիկական կանոնակարգերի պահանջներին անհամապատասխանության, թերի շինարարական աշխատանքների և ներկայացված տեխնիկական փաստաթղթերի ոչ ամբողջականության համար ակտ-կարգադրագրերով մերժվել են (2021թ.՝ 1332 գործարկում և 346 մերժում, 2020թ.՝ 1046 գործարկում և 211 մերժում):



Գործարկման դրական և բացասական եզրակացությունների բաշխվածությունն ըստ մարզերի ունի հետևյալ պատկերը



2022 թվականին էներգատեղակայանքներում գրանցվել է 21 մահվան ելքով պատահար, (2021թ.՝ 21 դեպք, 2020թ.՝ 14 դեպք)։ Մահացու ելքով պատահարների քանակական բաշխվածությունն ըստ մարզերի և տարիների ունի հետևյալ պատկերը՝



Տեսչական մարմնի աշխատակիցները 2020-2022թթ. մասնակցել են 1-ական համակարգային պատահարի մասնագիտական քննության:

Տրանսպորտի բնագավառ

2022 թվականի ընթացքում տրանսպորտի անվտանգության մասնագետների կողմից ՀՀ 10 մարզերի և Երևան քաղաքի տարածքներում գործող «Հայավտոկայարան» ՓԲԸ ավտոկայարաններում, ավտոկայաններում, երթակարգավարական կետերում, ինչպես նաև այդ տարածքներից դուրս կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող երթուղիների սկզբնակետ/վերջնակետերում պարբերաբար իրականացվել է միջպետական, միջմարզային, ներմարզային և ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների սպասարկման կազմակերպման գործընթացի, բեռնափոխադրումների, թեթև մարդատար ավտոմոբիլներով իրականացվող ուղևորափոխադրումների, ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային միջպետական, հանրապետական և մարզային (տեղական) նշանակության ճանապարհներին տեղադրված գովազդային վահանակների օրինականության, տրասպորտային միջոցների շահագործման և տեխնիկական զննության անցկացման կայանների, գազաբալոնների տեղադրման/վկայագրման կայանների գործունեության նկատմամբ 27361 վերահսկողական միջոցառում (2021 թվականին՝ 5269, 2020-ին՝ 11206):





Կանոնավոր, ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման գործընթացի նկատմամբ իրականացվել է 2390 վերահսկողական միջոցառում (2021 թվականին՝ 3796, 2020թ.՝ 6940), ինչը կազմում է ընդհանուր քանակի 9.8%:

Թեթև-մարդատար ավտոմոբիլներով իրականացվող ուղևորափոխադրումների նկատմամբ իրականցվել է 294 վերահսկողական միջոցառում, ինչը կազմում է ընդհանուր քանակի 1,2%-ը:

2022 թվականի ընթացքում Տեսչական մարմնի տարածքային բաժինների (բացառությամբ Երևանի) տրանսպորտային անվտանգության մասնագետների կողմից իրականացվել են մարզերի տարածքով անցնող ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային միջպետական, հանրապետական և մարզային (տեղական) նշանակության ճանապարհներին տեղադրված գովազդային վահանակների օրինականության նկատմամբ վերահսկողական միջոցառում: Հաշվետու ժամանակաշրջանում տարածքային բաժինների մասնագետների կողմից գույքագրվել են միջպետական ավտոճանապարհներին ապօրինի տեղադրված ընդհանուր թվով 811 (2021թ.՝ 599, 2020թ.՝ 665) գովազդային վահանակներ: Մասնավորապես, մարզերում՝ համաձայն պատկերի.



Տեխնիկական զննության կայաններում իրականցվել է 294 վերահսկողական միջոցառում (2021թ.՝ 171, 2020թ.՝ 107), ինչը կազմում է ընդհանուր քանակի 1,2%: Ըստ տարածքների բաշխվածությունն ունի հետևյալ գրաֆիկական պատկերը 2022թ. և 2021թ. համեմատականով.



Բեռնափոխադրումների նկատմամբ իրականցվել է 22482 վերահսկողական միջոցառում (2021թ.՝ ընդհամենը 3), ինչը կազմում է վերահսկողազան միջոցառումների ընդհանուր քանակի 82,1%-ը:

Մասնավորապես, վերահսկողական միջոցառումներն իրականացվել են Սյունիքի անշարժ կշռման կայանում թվով 21292, Արմավիրի անշարժ կշռման կայանում թվով 927 և շարժակամ կշեռքներով տարբեր մարզերում թվով 263:

Միջպետական կանոնավոր ուղևորափոխադրումների նկատմամբ իրականացվել է 17 վերահսկողական միջոցառում (2021թ.՝ 0, 2020թ.՝ 28)։

Առանց համապատասխան պայմանագրի ուղեւորների վաճառքի կետերի նկատմամբ իրականացվել է 12 վերահսկողական միջոցառում (2021թ.՝ 0, 2020թ.՝ 29)։

2022 թվականի ընթացքում ավելացել են նաև տրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազաբալոնների փորձարկման կայաններում (126), ինչպես նաև գազալցակայաններում (935) տրանսպորտի բնագավառում իրավական ակտերի նկատմամբ վերահսկողական գործառույթները։

Մասնավորապես, Երևան քաղաքում տեղադրման և գազաբալոնների փորձարկման կայաններում (24), ինչպես նաև գազալցակայաններում (347), իսկ մարզերում՝ համաձայն պատկերի.



<u>Քաղաքաշինության բնագավառ</u>

2022 թվականի ընթացքում կատարվել է 1267 դիտարկում, որոնցից 559-ը ՀՀ կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում, որն ըստ մարզերի ունի հետևյալ գրաֆիկական պատկերը՝



2021 թվականի ընթացքում կատարվել են 2560 վերահսկողական միջոցառում, որից 747-ը ՀՀ կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում: 2020 թվականի նույն ժամանակահատվածում կատարվել են 2880 վերահսկողական միջոցառումներ որոնցից 903-ը ՀՀ կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում:



Հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են ավարտված շինարարական 3207 օբյեկտների շահագործման ընդունող հանձնա-

ժողովների աշխատանք-ներին, այդ թվում՝ Երևանում 934 (29%), Արմավիրի՝ 288 (9%), Կոտայքի՝ 424 (13%), Արարատի՝ 233 (7%), Լոռու՝ 268 (9%), Գեղարքունիքի՝ 222 (7%), Արագածոտնի՝ 195 (6%), Շիրակի՝ 353 (11%), Սյունիքի՝ 104 (3%), Տավուշի՝ 96 (3%) և Վայոց ձորի մարզերում՝ 90 (3%):



2021 թվականի նույն ժամանակահատվածում Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են ավարտված շինարարական 2889 օբյեկտի շահագործման ընդունող հանձնաժողովների աշխատանքներին, իսկ 2020 թվականի նույն ժամանակահատվածում՝ 2384:



Հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է ավարտական ակտերի վերաբերյալ 1699 դրական և 1269 բացասական եզրակացություն, որոնք ըստ մարզերի այն ունեն հետևյալ գրաֆիկական բաշխվածությունը.



2021թ. նույն ժամանակահատվածում տրամադրվել են 1748 դրական և 1026 բացասական եզրակացություններ, իսկ 2020թ.՝ 1501 դրական և 767 բացասական եզրակացություններ:

Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից վերահսկողական աշխատանքների ընթացքում հայտնաբերվել է 271 **ինքնակամ կառույց** ՀՀ ամբողջ տարածքում, այդ թվում Երևանում՝ 21 (8%), Լոռու մարզում՝ 98 (36%), Գեղարքունիքի մարզում՝ 14 (5%), Կոտայքի մարզում՝ 48 (18%), Արագածոտնի մարզում՝ 21 (8%), Տավուշի մարզում՝ 20 (7%), Արարատի մարզում՝ 11 (4%), Արմավիրի մարզում՝ 26 (10%), Շիրակի մարզում՝ 7 (2%) և Վայոց ձորի մարզում՝ 5 (2%):



2021 թվականի առաջին կիսամյակում հայտնաբերվել է 481 ինքնակամ կառույց, իսկ 2020 թվականին՝ 430: Ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ բացահայտված

խախտումները վերացնելու ուղղությամբ, այն է՝ մարզպետներին և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին տրամադրվել են իրազեկող բնույթի գրություններ: Համայնքների ղեկավարներին ներկայացվել են առաջարկություններ՝ իրենց իրավասության սահմաններում ինքնակամ շինարարական աշխատանքները դադարեցնելու վերաբերյալ և հետևանքները վերացնելու ուղղությամբ:Իրավապահ մարմիններին և ՀՀ դատախազություն է ներկայացվել հաղորդում՝ քաղաքաշինության նորմերի խախտումների վերաբերյալ՝ ինչպես կառուցապատողների կողմից, այնպես էլ համայնքների ղեկավարների անգործության վերաբերյալ:



4. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ, ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի ընթացքում Տեսչական մարմնին հանրության և տնտեսավարող սուբյեկտների կողմից հասցեագրվել է ընդհանուր առմամբ 684 բողոք, որից 432-ը (63.16%) վերաբերում է քաղաքաշինության բնագավառին, 114-ը (16.67%)՝ տրանսպորտային անվտանգության, 78-ը (11.4%)՝ հրդեհային և տեխնիկական անվտագության, 56-ը (8.19%)՝ էներգետիկայի և էներգասպառման, իսկ 4-ը (0.58%)՝ հողի պահմանման և հողօգտագործման բնագավառներին:

2021 թվականի ընթացքում Տեսչական մարմնին հասցեագրվել էր 704 բողոք, որից 502-ը (71,3%) քաղաքաշինության բնագավառի, 74-ական (10,5%)՝ տրանսպորտի անվտանգության և հրդեհային և տեխնիկական անվտագության, 35-ը (4,97%)՝ էներգետիկայի և էներգասպառման, իսկ 19-ը (2,7%)՝ հողի պահմանման և հողօգտագործման բնագավառների վերաբերյալ:

2020 թվականին Տեսչական մարմնին հասցեագրվել էր ընդհանուր առմամբ 476 բողոք, որից 314-ը (66%) վերաբերում էին քաղաքաշինության, 77-ը (16,2%)՝ տրանսպորտի անվտանգության, 41-ը (8,6%)՝ հրդեհային և տեխնիկական անվտագության, 25-ը (5,2%)՝ էներգետիկայի և էներգասպառման, իսկ 19-ը (4%)՝ հողի պահմանման և հողօգտագործման բնագավառներին:

2020-2022 թվականների ընթացքում ստացված բողոքների համեմատական գրաֆիկն ունի հետևյալ արտացոլումը.





2022 թվականի ընթացքում հանրությունից և տնտեսավարողներից ստացված բողոքներն ըստ ամիսների ունեն հետևյալ բաշխվածությունը՝



Ընդ որում, ստացված բողոքների ընդհանուր քանակի 58,9%-ը վերաբերում է Երևանում գործունեություն իրականացնող տնտեսավարողներին կամ գտնվող օբյեկտներին, մնացածն՝ ըստ պատկերի.



2022 թվականի ընթացքում ստացված 684 բողոքներից հիմնավոր են 302-ը (44.15%), որոնցից 2022 թվականին լուծում է ստացել 262-ը (հիմնավոր բողոքների 86.75%): Ստորև բերված է նշված երեք ցուցանիշների բաշխվածությունն ըստ բնագավառների՝



Ստացված բողոքների 43.71% (299 հատ) հիմնավոր չեն, 15 բողոքներով բարձրացված խնդիրների լուծումը դուրս է Տեսչական մարմնի լիազորությունների շրջանակներից: Ընթացքի մեջ է 108 բողոք, որից 66-ը վերաբերում է քաղաքաշինության բնագավառին, 3-ը՝ տրանսպորտային անվտանգության, 23-ը՝ հրդեհային և տեխնիկական անվտագության, 15-ը՝ էներգետիկայի և էներգասպառման, իսկ 1-ը՝ հողի պահմանման և հողօգտագործման բնագավառներին:

2022 թվականի ընթացքում հանրությունից թեժ գծով ստացվել է 269 բողոք, ինչը կազմում է բոլոր բողոքների 39.3%, ընդ որում 144-ը վերաբերում է քաղաքաշինության բնագավառին, 79-ը՝ տրանսպորտային անվտանգության, 35-ը՝ հրդեհային և տեխնիկական անվտագության, 15-ը՝ էներգետիկայի և էներգասպառման, իսկ 1-ը՝ հողի պահմանման և հողօգտագործման բնագավառներին:

<u>Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառ</u>

Հաշվետու ժամանակահատվածում հանրությունից և տնտեսավարող սուբյեկտներից ստացված 78 դիմում-բողոքների ուսումնասիրությունից պարզվել է, որ հիմնավոր են 36-ը, ինչը կազմում է ընդհանուր քանակի 46.15%: Հիմնավոր բողոքների 69.44% (25 հատ) արդեն իսկ լուծում է ստացել, 2-ի լուծումը դուրս է Տեսչական մարմնի լիազորությունների

շրջանակներից, 23-ն ընթացքի մեջ են: Հիմնավոր չի 28 բողոք: Հանրությունից ստացված 5 բողոքի հիման վրա իրականացվել են ստուգումներ: 35 բողոք (44.87 %) ստացվել է թեժ գծով:

52 բողոք (66.6%) վերաբերում են Երևանում, 8-ը (10.2%)՝ Կոտայքի, 7-ը՝ Լոռու (9%), 4-ն՝ Արմավիրի, 3-ը՝ Վայոց Ձորի, 2-ը Շիրակի և մեկական՝ Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում գտնվող օբյեկտներին:

57 բողոքներում ստացված բողոքների ընդհանուր քանակի 73% բարձրացված հարցերը վերաբերում են գործող օբյեկտներում հրդեհային անվտանգության պահանջների խախտումներին: Դիմումների ուսումնասիրությամբ պարզվել է, որ 16-ում նշված խնդիրները հիմնավոր չեն: 21 հիմնավոր բողոք արդեն իսկ լուծում են ստացել, 2-ի լուծումը դուրս է Տեսչական մարմնի լիազորությունների շրջանակից, 18-ն ընթացքի մեջ են:

2021 թվականի ընթացքում քաղաքացիներից, իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից ստացվել է 74 դիմում-բողոք: Թեժ գծով ստացվել է 22 բողոք (ընդհանուր քանակի 29,73%): Բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հիմնավոր են 35-ը, ինչը կազմում է ընդհանուր քանակի 47,3 %, հիմնավոր չեն 31-ը (ընդհանուր քանակի 42%), ևս 20 բողոք գտնվում է ուսումնասիրության ընթացքում: Հիմնավոր բողոքներից 23-ը (հիմնավորների 65,71%) լուծում է ստացել: Հանրությունից ստացված 8 բողոքի հիման վրա իրականացվել են ստուգումներ: 2020 թվականի նույն ժամանակահատվածում ստացվել է 23 բողոք, որից հիմնավոր են 13-ը (68,2):

2020 թվականի ընթացքում քաղաքացիներից, իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից ստացվել է 41 դիմում-բողոք: Բողոքների 36,6 %-ը (15-ը) ստացվել է թեժ գծով: Ստացված բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հիմնավոր են 26-ը, ինչը կազմում է ընդհանուր քանակի 63,4 տոկոսը, հիմնավոր չեն՝ 11-ը, ևս 4 բողոք գտնվում է ուսումնասիրության ընթացքում: Հիմնավոր բողոքներից 7-ը (27%) լուծում է ստացել: Հանրությունից ստացված 2 բողոքի հիման վրա, որից մեկը ստացվել է թեժ գծով, իրականացվել են ստուգումներ: Կատարված ստուգումների և հետազոտությունների արդյունքում բացահայտված խախտումների վերաբերյալ կազմվել է 10 արձանագրություն:

2020-2022 թվականների ընթացքում հանրությունից ստացված բողոքների ընդհանուր քանակի, հիմնավոր և լուծում ստացած բողոքների բաշխվածությունն ըստ տարիների ունի հետևյալ պատկերը.



Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել է 194 գրություն, որից 189-ը (97.4%) արդեն իսկ լուծում են ստացել, 5-ը գտնվում է ընթացքի մեջ: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված 20 գրության հիման վրա իրականացվել են ստուգումներ:

2021 թվականին պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել է 272 գրություն, որից 264-ը (97%) լուծում էին ստացել 2021 թվականի ընթացքում:

Տրանսպորտի բնագավառ

2022 թվականի ընթացքում Տեսչական մարմին հասցեագրված 114 բողոքներում բարձրացված խնդիրների կարգավորման ուղղությամբ տրանսպորտային անվտանգության վարչության և տարածքային բաժինների տրանսպորտային անվտանգության մասնագետների կողմից իրականացվել են առարկայական ուսումնասիրություն-ներ, դիտարկումներ և վերահսկողական գործառույթներ: Բողոքների բաշխվածությունն ըստ մարզերի ունի հետևյալ պատկերը



Հաշվետու ժամանակահատվածում հանրությունից ստացված հիմնավոր 52 բողոքներից 44-ը (84.62%) լուծում են ստացել, 3-ը ընթացքի մեջ են, 4 խնդրի լուծումներ դուրս են Տեսչական մարմնի լիազորությունների շրջանակներից: Հիմնավոր չեն 63 բողոք: Բողոքներից 79-ը (69.3%) ներկայացվել է թեժ գծով:

Բարձրացված խնդիրները հիմնականում վերաբերում են.

- ✓ չվաճուցակների խախտումներին՝ 35,
- ✓ փոխադրավարձի բարձրացմանը՝ 14,
- ✓ տրանսպորտային միջոցի գերբեռնվածությանը՝ 8,
- ✓ ապօրինի ուղևորափոխադրումներին՝ 8:

2021 թվականին տրանսպորտի ոլորտի վերաբերյալ Տեսչական մարմին հասցեագրված 74 բողոքներից 59-ը (79,73%) ներկայացվել են թեժ գծով: Հանրությունից ստացված հիմնավոր

50 բողոքներից լուծում են ստացել 43-ը (86%), հիմնավոր չեն 23 բողոք (ընդհանուր քանակի 31%):

2020 թվականին տրանսպորտի ոլորտի վերաբերյալ Տեսչական մարմին հասցեագրված 77 բողոքներից 55-ը (71,4%) ներկայացվել է թեժ գծով: Հանրությունից ստացված հիմնավոր 5ц8 բողոքներից լուծում են ստացել 47-ը (81%)

2020-2022 թվականների ընթացքում հանրությունից ստացված բողոքների ընդհանուր քանակի, հիմնավոր և լուծում ստացած բողոքների բաշխվածությունն ըստ տարիների ունի հետևյալ պատկերը.



Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել է 47 գրություն, որից 41-ը (87.23) արդեն իսկ լուծում են ստացել, 6-ը գտնվում է ընթացքի մեջ:

<u>Էներգետիկայի և էներգասպառման բնագավառ</u>

Հաշվետու ժամանակահատվածում հանրությունից ստացված 56 բողոքներից հիմնավոր են 33-ը (ընդհանուր քանակի 59%), որոնցից լուծում են ստացել 26-ը (հիմնավորների 85,7%), ընթացքի մեջ են գտնվում 15-ը: Բողոքներից 11-ը (19.6 %) ստացվել է թեժ գծով:

Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների դիմումներում բարձրացված հարցերը հիմնականում վերաբերում են.

- ✓ մայրուղային գազատարների և էլեկտրահաղորդման օդային գծերի անվտանգության գոտիներում իրականացվող շինարարական աշխատանքներին,
- ✓ առանց սեփականատիրոջ հետ սահմանված կարգով համաձայնեցնելու՝ սեփականաշնորհված հողամասերի տարածքով գազատարների անցկացմանը:

Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների դիմումներում բարձրացված այլ հարցեր ուսումնասիրվում են, ձեռնարկվում են բոլոր հնարավոր միջոցները էներգետիկայի բնագավառում հասարակության անվտանգությունը և հարմարավետությունն ապահովելու ուղղությամբ: Մշտապես տրամադրվում է իրավախորհրդատվական աջակցություն:

Բողոքների բաշխվածությունն ըստ մարզերի ունի հետևյալ պատկերը.



2021 թվականի ընթացքում հանրությունից և տնտեսավարողներից ստացված 35 բողոքներից 26-ը (74,28%) հիմնավոր են, 8-ը (22,8%)՝ ոչ հիմնավոր: Հիմնավոր բողոքներից 21-ը լուծում է ստացել (հիմնավորների 80,76%), 5-ն ընթացքի մեջ են: Թեժ գծով բողոքներ չեն արձանագրվել:

2020 թվականի ընթացքում ստացված 25 բողոքներից 22-ը (88%) հիմնավոր էին, 3-ը (12%)՝ ոչ հիմնավոր: Հիմնավոր բողոքներից 18-ը լուծում էին ստացել (82%):

2020-2022 թվականների ընթացքում ստացված բողոքների ընդհանուր քանակի, հիմնավոր և լուծում ստացած բողոքների բաշխվածությունն ըստ տարիների ունի հետևյալ պատկերը.



2022թ. պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված 5 գրություններից 2-ը լուծում են ստացել (2021թ. առաջին կիսամյակ՝ 4 գրություններից բոլորը լուծում են ստացել), 2-ն էլ ընթացքի մեջ են:

Քաղաքաշինության բնագավառ

Նշված ժամանակահատվածում Տեսչական մարմինն ուսումնասիրել է իրեն հասցեագրված քաղաքաշինական ոլորտին առնչվող ընդհանուր առմամբ 432 (144-ը թեժ գծով) բողոք: 2022 թվականի ընթացքում հանրությունից ստացված բողոքներից 180-ը հիմնավոր են (բողոքների 41.7%), 166-ն (հիմնավոր բողոքների 92%) արդեն իսկ լուծում են ստացել:

Քաղաքաշինության բնագավառում հանրությունից ստացված բողոքների բաշխումն ըստ տարածքային միավորների ունի հետևյալ գրաֆիկական պատկերը.



Դիմումներում նշված հասցեներում կատարվել է մասնագիտական տեղազննություն, ստուգվել է իրականացվող շինարարական աշխատանքների, առկա քաղաքաշինական փաստաթղթերի տրման օրինականությունը և համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանն ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին: Կատարված աշխատանքի արդյունքում պարզվել է, որ խնդրահարույց և առավել կրկնվող խնդիրները վերաբերվում են հետևյալին.

- շինարարական նորմերի խախտմանը՝ 268 բողոք,
- ապօրինի/ինքնակամ շինարարությանը և հողազավթմանը՝ 78 բողոք:

2021 թվականին Տեսչական մարմինը ուսումնասիրել է իրեն հասցեագրված քաղաքաշինական բնագավառին առնչվող ընդհանուր առմամբ 259 (որոնցից 65-ը թեժ գծով) բողոք: Հանրությունից ստացված բողոքներից հիմնավոր էին 204-ը (ընդհանուր քանակի 78.8%), որոնցից 132-ը (հիմնավոր բողոքների 64.7%) լուծում էին ստացել նշված ժամանակահատվածում:

2020 թվականի ընթացքում Տեսչական մարմինը ուսումնասիրել է իրեն հասցեագրված քաղաքաշինական ոլորտին առնչվող ընդհանուր առմամբ 314 բողոք: Հիմնավոր են 252 դիմում, լուծում է ստացել 150-ը (հիմնավոր բողոքների 59.5%):

2020-2022 թվականների ընթացքում հանրությունից ստացված բողոքների ընդհանուր քանակի, հիմնավոր և լուծում ստացած բողոքների բաշխվածությունն ըստ տարիների ունի հետևյալ պատկերը.



Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել է 323 գրություն, որից 290-ը (89.7%) արդեն իսկ լուծում են ստացել, 33-ը գտնվում են ընթացքի մեջ: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված 20 գրության հիման վրա իրականացվել են ստուգումներ:

<u>Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառ</u>

Նշված ժամանակահատվածում Տեսչական մարմնին հանրությունից հասցեարգել է 4 բողոք, որոնք վերաբերում են հողի պահպանման և հողօգտագործման բնագավառին: Հիմնավոր մեկ բողոքը լուծում է ստացել: Թեժ գծով բողոք չի ստացվել:

2021 թվականի ընթացքում հանրությունից ստացված 19 բողոքներից 8-ը (42,1%) հիմնավոր են, 2-ը (10,52%)՝ ոչ հիմնավոր: Հիմնավոր բողոքներից 5-ը լուծում են ստացել (62,5%), 10-ն ընթացքի մեջ են: Թեժ գծով բողոք չի ստացվել: Հանրությունից ստացված բողոքների հիման վրա իրականացվել է 3 ստուգում:

2020 թվականի ընթացքում Տեսչական մարմին հասցեագրվել էր 19 բողոք, որոնցից հիմնավոր էին 9, ոչ հիմնավոր՝ 10 բողոք, 6-ի հիման վրա կատարվել են ստուգումներ: Բոլոր հիմնավոր բողոքները լուծում են ստացել:

2020-2022 թվականների ընթացքում ստացված բողոքներում բարձրացված հարցերը հիմնականում վերաբերում են՝

- ✓ ապօրինի հողամասի օտարմանը,
- ✓ համայնքային հողերի վրա ինքնակամ կառուցապատմանը,
- ✓ ապօրինի շինթույլտվություններին,
- ✓ հողերի համադրմանը:

Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել է 20 գրություն, բոլորը (100%) արդեն իսկ լուծում են ստացել: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված 14 գրության հիման վրա իրականացվել են ստուգումներ:

5. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՎՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հաշվետու ժամանակահատվածում կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 4443 արձանագրություն: Կայացվել է 20 վարչական վարույթը կարճելու վերաբերյալ որոշում, 2760 վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշում, արձակվել են կարգադրագրեր՝ 235 արտադրական վտանգավոր օբյեկտի շահագործման դադարեցման վերաբերյալ: Նշանակվել է ընդհանուր առմամբ 466.414.000 դրամի չափով վարչական տուգանք: 2022 թվականի ընթացքում գանձվել է 131.229.602 դրամ:

2021 թվականի ընթացքում կայացվել է 1373 որոշում վարչական տույժ նշանակելու վերաբերյալ, որով սահմանվել է ընդհանուր առմամբ 126.130.000 ՀՀ դրամ տուգանք: 2021 թվականի ընթացքում պետական բյուջե գանձվել է 83.129.481 ՀՀ դրամ, որից 41.070.000 ՀՀ դրամ 2021 թվականին նշանակված տույժերի հիման վրա:





<u>Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառ</u>

2022 թվականին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 620 արձանագրություն: Հաշվետու ժամանակահատվածում կայացվել է 606 վարչական որոշում՝ վարչական տույժ նշանակելու մասին, 7 կարճման որոշում: Նշանակվել է ընդհանուր առմամբ 122.829.000 դրամի չափով վարչական տուգանք:

Հաշվետու ժամանակահատվածում արձակվել են կարգադրագրեր՝ 235 արտադրական վտանգավոր օբյեկտի շահագործման դադարեցման վերաբերյալ:

2021 թվականին կայացվել է 376 որոշում վարչական տույժ նշանակելու մասին: Նշանակվել է ընդհանուր առմամբ 45.280.000 ՀՀ դրամ տուգանք: Տեսչական մարմնի կողմից տրված կարգադրագրերի պահանջները չկատարելուն:

2020 թվականին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 400 արձանագրություն: Կայացվել էր 413 որոշում, որից 389-ը՝ վարչական տույժ նշանակելու մասին, 15-ը կարճման, 4-ն՝ արտադրական վտանգավոր օբյեկտի գործունեությունը դադարեցնելու մասին, 5-ը՝ փորձագետի նկատմամբ վարչական վարույթ հարուցելու մասին: Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում կայացված 11 վարչական ակտ բողոքարկվել է վերադասության կարգով, 24-ը՝ դատական:

2020-2022 թվականների ընթացքում վարչական տույժ նշանակելու մասին կայացված որոշումների քանակի բաշխվածությունն ունի հետևյալ պատկերը.



Արձանագրված խախտումները վերաբերում են ձեռնարկություններում, հիմնարկներում, կազմակերպություններում, հասարակական վայրերում, պահեստային շենքերում, հանրակացարաններում, ինչպես նաև համապատասխան օբյեկտներ նախագծելիս և կառուցելիս հրդեհային անվտանգության կանոնները խախտելու կամ չկատարելու, կամ հակահրդեհային գույքի, սարքավորումների, հրդեհները հայտնաբերելու և հանգցնելու ավտոմատ միջոցների օգտագործման ու պահպանության կանոնները խախտելու դեպքերին, ինչպես նաև արտադրական վտանգավոր օբյեկտները տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրությանը համապատասխան՝ ռեեստրում գրանցման չներկայացնելուն և տեխնիկական անվտանգության փորձաքննություն չիրականացնելուն, ինչպես նաև Տեսչական մարմնի կողմից տրված կարգադրագրերի պահանջները չկատարելուն:

Էներգետիկայի և էներգասպառման բնագավառ

2022 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում էներգետիկայի ոլորտի օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ կազմվել է 111 արձանագրություն, որոնցով հաշվետու ժամանակահատվածում կայացվել է 38 որոշում վարչական տույժ նշանակելու մասին: Նշանակվել է ընդհանուր առմամբ 19.750.000 ՀՀ դրամ տուգանք:

2021 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում էներգետիկայի ոլորտի օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ կազմվել է 27 ստուգման ակտ և 13 արձանագրություն, որոնցով կայացվել է 36 որոշում վարչական տույժ նշանակելու մասին և 3 որոշում վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին: Նշանակվել էր ընդհանուր առմամբ 1.900.000 ՀՀ դրամ տուգանք:

2020 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում էներգետիկայի ոլորտի օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ կազմվել է 18 արձանագրություն, կայացվել է 20 որոշում վարչական տույժ նշանակելու մասին, 3 որոշում վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին:

Արձանագրված խախտումները վերաբերում են նոր կառուցվող և վերակառուցվող էներգատեղակայանքները գործող ցանցերին առանց Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողություն իրականացնող լիազորված պետական մարմնի գործարկման եզրակացության միացնելուն, ինչպես նաև՝ Տեսչական մարմնի կողմից տրված կարգադրագրի պահանջները չկատարելուն:

Տրանսպորտային անվտանգության բնագավառ

Իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում տրանսպորտային օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ կազմվել է 2946 արձանագրություն, որոնցից 1470-ով կայացվել է վարչական տույժ նշանակելու մասին որոշում, 11-ով կայացվել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին որոշում, մնացածը գտնվում են քննության փուլում: 2022 թվականին նշանակվել է ընդհանուր առմամբ 267.085.000 ՀՀ դրամ տուգանք:

2021 թվականի ընթացքում կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 636 արձանագրություն, որից 503-ով կայացվել է վարչական տույժ նշանակելու մասին որոշում, 7-ով կայացվել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին որոշում: 2021 թվականին նշանակվել է ընդհանուր առմամբ 18.940.000 ՀՀ դրամ տուգանք:

2020 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական գործառույթների ընթացքում տրանսպորտային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմվել է 307 արձանագրություն, կայացվել է 318 որոշում, որից 257-ը՝ վարչական տույժ նշանակելու մասին, 61-ը՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի կարճման մասին:

2020-2022 թվականների ընթացքում վարչական տույժ նշանակելու մասին կայացված որոշումների քանակների բաշխվածությունն ունի հետևյալ պատկերը.



Արձանագրված խախտումները հիմնականում վերաբերում են ծանրաքաշ կամ մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցների կշռման ընթացքում հայտնաբերված խախտումներին, որոնք մեկ առնու վրա ընկնող բեռնվածքի կամ ընդհանուր քաշի գերազանցումով խախտումներ են:

<u>Քաղաքաշինության բնագավառ</u>

2022 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում քաղաքաշինության բնագավառի օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ կազմվել է 740 արձանագրություն, կայացվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 638 որոշում: Նշանակվել է ընդհանուր առմամբ 50.450.000 ՀՀ դրամ տուգանք:

2021 թվականի նույն ժամանակահատվածում կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 420 որոշում: Նշանակվել էր ընդհանուր առմամբ 49.810.000 ՀՀ դրամ տուգանք:

2020 թվականին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 226 արձանագրություն, կայացվել է 214 որոշում վարչական տույժ նշանակելու մասին, 1 կասեցման որոշում: 2020 թվականի ընթացքում կայացված 7 վարչական ակտ բողոքարկվել է վերադասության կարգով, 7-ը՝ դատական կարգով:

2020-2022 թվականների ընթացքում վարչական տույժ նշանակելու մասին կայացված որոշումների քանակի բաշխվածությունն ունի հետևյալ պատկերը.



Արձանագրված խախտումները մեծամասամբ վերաբերում են ճարտարապետահատակագծային առաջադրանքին չհամապատասխանող նախագծերը համաձայնեցնելուն, սահմանված կարգի խախտումներով ճարտարապետահատակագծային առաջադրանքներ տրամադրելուն, կառուցապատողի կողմից առանց համապատասխան լիցենզիա ունեցող անձանց միջոցով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորման ենթակա շինարարական աշխատանքներ իրականացնելուն, օրենքով սահմանված դեպքերում կառուցապատողի կողմից հեղինակային կամ տեխնիկական հսկողության իրականացում չապահովելուն:

Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառ

2022 թվականի ընթացքում կայացվել է 8 որոշում՝ վարչական տույժ նշանակելու մասին: Որոշումների հիման վրա նշանակված գումարը կազմում է 6.300.000 ՀՀ դրամ:

2021 թվականի ընթացքում Տարեկան ծրագրին համապատասխան իրականացված ստուգումների արդյունքում կայացվել է 38 որոշում՝ վարչական տույժ նշանակելու մասին: Որոշումների հիման վրա նշանակված գումարը կազմում է 10.200.000 ՀՀ դրամ, որով 8.000.000-ը Տարեկան ծրագրով իրականացված ստուգումների հիման վրա, իսկ 2.200.000-ն՝ ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումներով:

6. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԴՐԱ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ

ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐ ՎԵՐԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ

2022 թվականին Տեսչական մարմնի կողմից կայացված վարչական ակտերի դեմ բերվել է ընդհանուր առմամբ 94 վերադաս բողոք:

2021 թվականին Տեսչական մարմնի կողմից կայացված վարչական ակտերի դեմ բերվել է ընդհանուր առմամբ 62 վերադաս բողոք, 2020-ին՝ 32: Ըստ տարիների համեմատական պատկերը հետևյալն է.



Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառ

2022 թվականի ընթացքում վերադասության կարգով բողոքարկվել է 20 վարչական ակտ, որից 15-ով (75%) որոշում է կայացվել կայացված վարչական ակտերն անփոփոխ թողնելու մասին, իսկ 5-ով՝ որոշում՝ կայացված որոշումը բեկանելու և վարչական գործի վարույթը կարճելու մասին: Բողոքները վերաբերել են արտադրական վտանգավոր օբյեկտների գրանցման ռեեստրում գրանցելու պահանջի, տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացման, արտադրական վտանգավոր օբյեկտի կամ դրանում առկա տեխնիկական միջոցի, տեխնոլոգիական սարքավորման շահագործումը դադարեցնելու պահանջներին:

2021 թվականի ընթացքում վերադասության կարգով բողոքարկվել է 14 վարչական ակտ, որից 10-ով որոշում է կայացվել կայացված վարչական ակտերն անփոփոխ թողնելու մասին, իսկ 3-ով՝ որոշում՝ կայացված որոշումը բեկանելու և վարչական գործի վարույթը կարճելու մասին: 2020 թվական ն կայացված 11 վարչական ակտ է բողոքարկվել, որոնցից 9-ը թողնվել է անփոփոխ, 1-ը՝ կարճվել է, քանի որ բողոքարկվել է միաժամանակ և՛ դատական,

և՛ վերադասության կարգով, 1-ը կարճվել է ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի ուժով, համաձայն որի՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:



Էներգետիկայի և էներգասպառման բնագավառ

2022 թվականին ներկայացվել են 2 վարչական բողոքներ, որոնց քննության արդյունքում վարչական ակտերը թողնվել են անփոփոխ:

2021 թվականի ընթացքում վերադաս բողոքներ չեն ներկայացվել: 2020 թվականի ընթացքում բողոքարկվել է 2 վարչական ակտ, որոնց քննության արդյունքում վարչական ակտերը մի մասով կարճվել, իսկ մի մասով՝ թողնվել են անփոփոխ: Բողոքները վերաբերվել են վարչական ակտերի իրավաչափությանը և դրանց կայացման ժամկետներին:

Տրանսպորտի բնագավառ

2022 թվականին վերադասության կարգով բողոքարկվել է 70 վարչական ակտ, որից 64-ով (91,4%) որոշում է կայացվել բողոքն առանց բավարարման և որոշումն անփոփոխ թողնելու մասին, 6-ով որոշում է կայացվել որոշումը բեկանելու և վարչական գործի վարույթը կարճելու մասին: Բողոքները վերաբերվել են Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնողների կողմից փոխադրումներին ներկայացվող պահանջները չկատարելու պահանջին:

2021 թվականին վերադասության կարգով բողոքարկվել է 46 վարչական ակտ, որից 40-ով որոշում է կայացվել բողոքն առանց բավարարման և որոշումն անփոփոխ թողնելու մասին, 5-ով որոշում է կայացվել որոշումը բեկանելու և վարչական գործի վարույթը կարճելու մասին, 1-ը՝ ընթացիկ: 2020 թվականին կայացված 12 վարչական ակտ է

բողոքարկվել վերադասության կարգով, 12 դեպքում էլ կայացված վարչական ակտերը թողնվել են անփոփոխ։



Քաղաքաշինության բնագավառ

2022 թվականին քաղաքաշինության բնագավառում վերադասության կարգով բողոքարկվել է 2 վարչական ակտ, որոնցով որոշում է կայացվել բողոքն առանց բավարարման և որոշումն անփոփոխ թողնելու մասին: Բողոքները վերաբերվել են վարչական ակտերի իրավաչափությանը և դրանց կայացման ժամկետներին։

2021 թվականին քաղաքաշինության բնագավառում վերադասության կարգով բողոքարկվել է 2 վարչական ակտ, որոնցից 1-ով որոշում է կայացվել բողոքն առանց բավարարման և որոշումն անփոփոխ թողնելու մասին: 2020 թվականին վերադասության կարգով բողոքարկվել է 7 վարչական ակտ, բոլորը կարճվել են։

ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ

2022 թվականի ընթացքում դատարան մուտքագրված 143 հայցադիմումից վարույթ են ընդունվել 100-ը, 8-ի ընդունումը մերժվել է, մյուսներն ընդունման փուլում են։ 2021 թվականին Տեսչական մարմնի դեմ ներկայացվել է 76 հայցադիմում, 2020 թվականին՝ 73 հայցադիմում։ Հայցադիմումները մեծամասամբ վերաբերում են Տեսչական մարմնի կողմից ընդունված վարչական ակտերի (որոշում, կարգադրագիր, ցուցում) վիճարկմանը։ Ըստ բնագավառների դատարան մուտք արած հայցադիմումներն ունեն հետևյալ գրաֆիկական բաշխվածությունն ըստ տարիների.



Հաշվետու տարում կայացվել է 51 դատական վճիռ, որոնցից 45 հայցապահանջ բավարարվել է, 6-ը՝ մերժվել: Կայացված դատական վճիռների դեմ Տեսչական մարմնի կողմից բողոքարկվել է 7 վճիռ, որոնք մերժվել են (1 վերաքննիչ բողոքի ընդունումն է մերժվել, իսկ 6 բողոքները մերժվել են անհիմն լինելու պատճառաբանությամբ):

Հայցի ընդունումը մերժելու դեմ նախկինում կայացված դատարանի որոշումների դեմ տնտեսավարողի ներակայացրած 2 վերաքննիչ բողոքներից 2-ն էլ բավարարվել են: Հայցապահանջը մերժելու դեմ տնտեսավարողի ներակայացրած 2 վերաքննիչ բողոքներից 2-ն էլ քննության փուլում են:

<u>Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառ</u>

Ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացված 41 հայցադիմումից վարույթ է ընդունվել 32-ը, 2-ի ընդունումը մերժվել է, մյուսներն ընդունման փուլում են:

Կայացվել է 21 վճիռ, որոնցով Տեսչական մարմնի դեմ 17 հայցապահանջները բավարարվել են, իսկ 4-ը՝ մերժվել:

Տեսչական մարմնի կողմից ներկայացված 3 վերաքննիչ բողոքները մերժվել են: Տնտեսավարողի ներկայացրած 3 վերաքննիչ բողոքները քննության փուլում են: Հայցի ընդունումը մերժելու դեմ տնտեսավարողի կողմից բերված 1 վերաքննիչ բողոքը բավարարվել է:

2021 թվականին նշված բնագավառում ներկայացվել էր 42 հայցադիմում, Տեսչական մարմնի դեմ կայացվել էր 16 վճիռ, Տեսչական մարմնի օգտին՝ 8 վճիռ, 2-ով դատական գործի վարույթը կարճվել էր: Տեսչական մարմնի կողմից ներկայացվել էր 6 վերաքննիչ բողոք, տնտեսավարող սուբյեկտների կողմից՝ 6 վերաքննիչ բողոք: 2020 թվականին ներկայացվել էր

24 հայցադիմում, որոնցից 4-ով վճիռ էր կայացվել Տեսչական մարմնի դեմ, Տեսչական մարմնի կողմ՝ 5 վճիռ, վերաքննիչ դատարան բողոքարկվել էր 1 դատական ակտ։

Էներգետիկայի և էներգասպառման բնագավառ

Հաշվետու ժամանակահատվածում նշված բնագավառին առնչվող հարցերով դատարան հայցադիմում չի ներկայացվել։

2021 թվականի ընթացքում ներկայացվել էր 1 հայցադիմում։

2020 թվականին ներկայացվել էր 1 հայցադիմում, Տեսչական մարմնի դեմ 1 վճիռ էր կայացվել, բողոքարկվել էր վերաքննիչ դատարան։

Տրանսպորտի բնագավառ

Ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացված 75 հայցադիմումից վարույթ է ընդունվել 53-ը, 3-ի ընդունումը մերժվել է, մյուսներն ընդունման փուլում են։

Կայացվել է 19 դատական վճիռ, որոնցից 17 հայցապահանջ բավարարվել է, 2-ը՝ մերժվել։

Հաշվետու տարում Տեսչական մարմնի կողմից ներկայացվել է 4 վերաքննիչ բողոք, որոնք մերժվել են՝ 3-ն անհիմն լինելու պատճառաբանությամբ, իսկ մեկ բողոքի վարույթի ընդունումն է մերժվել։ Հայցի ընդունումը մերժելու դեմ տնտեսավարողի կողմից բերված 1 վերաքննիչ բողոքը բավարարվել է։

2021 թվականին ներկայացվել էր 22 հայցադիմում։ 13 դատական գործով վճիռ էր կայացվել Տեսչական մարմնի դեմ, 2 հայցադիմումով որոշում էր կայացվել հայցադիմումը վարույթ ընդունելը մերժելու մասին, 1-ով՝ հայցադիմումը վերադարձնելու մասին։ Տեսչական մարմնի կողմից ներկայացվել էր 4 վերաքննիչ բողոք, քաղաքացու կողմից՝ 1 վերաքննիչ բողոք։ 2020 թվականին 33 հայցադիմում էր ներկայացվել։ 19 դատական գործով վճիռ էր կայացվել Տեսչական մարմնի դեմ, 5-ով Տեսչական մարմնի կողմ, 5-ով վերաքննիչ բողոք էր ներկայացվել։

Քաղաքաշինության բնագավառ

Ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացված 19 հայցադիմումից վարույթ է ընդունվել 10-ը, մյուսներն ընդունման փուլում են։

Կայացված 3 վճիռներով տնտեսավարողի հայցապահանջները բավարարվել են։

2021 թվականին ներկայացվել էր 3 հայցադիմում։ 6 դատական գործով վճիռ էր կայացվել Տեսչական մարմնի դեմ, 1 դատական գործի վարույթ կարճվել է։ 2020 թվականին թվով 10 հայցադիմում էր ներկայացվել, որոնցից Տեսչական մարմնի դեմ վճիռ չէր կայացվել, 1-ի վարույթ ընդունելը մերժվել էր։

Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառ

Ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացված 8 հայցադիմումներից 1-ը ընդունվել է վարույթ, 1-ի՝ ընդունումը մերժվել է:

Կայացված 8 վճիռներով տնտեսավարողի հայցապահանջները բավարարվել են:

2021 թվականին դատարան ներկայացվել էր 8 հայցադիմում: Տեսչական մարմնի դեմ կայացված վճիռներ չեն եղել, Տեսչական մարմնի օգտին կայացվել էր 4 վճիռ, 1 դատական գործով որոշում էր կայացվել գործի վարույթը կարճելու մասին, 1 հայցադիմումով որոշում էր կայացվել վարույթ ընդունելը մերժելու մասին: 2020 թվականին 7 հայցադիմում էր ներկայացվել, որոնցից Տեսչական մարմնի դեմ վճիռներ չեն կայացվել, Տեսչական մարմնի կողմ՝ 3 վճիռ, վերաքննիչ դատարան բողոքարկվել է 3 դատական ակտ, որոնք կայացվել են Տեսչական մարմնի օգտին:

7. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2022 թվականին Տեսչական մարմնի պաշտոնական կայքում հրապարակվել է 89 հաղորդագրություն, որից ընդհանուր գործունեությանը վերաբերող աշխատանքային հանդիպում-քննարկումների, այցերի, ժողովների վերաբերյալ հաշվետու կիսամյակում ՏՄ պաշտոնական կայքէջում տեղադրվել է 16 հաղորդագրություն, որոնք հրապարակվել են նաև տպագիր մամուլով: ՔՏՀԱՏՄ-ի կողմից նկարահանվել էր 4 ընդհանուր իրազեկող բնույթի տեսահոլովակ՝ ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմնի կողմից ստուգումների անցկացման կարգի վերաբերյալ https://www.youtube.com/watch?v=Rzb-OXh-NMw, 2-ը՝ տրանսպորտի անվտանգության բնագավառի՝ ԻՐԱԶԵԿՈՒՄ՝ բեռնափոխադրողների համար https://www.youtube.com/watch?v=RMtROV8STQk, ԻՐԱԶԵԿՈՒՄ՝ գազաբալոնային սարքավորումների տեղադրման և պարբերական վկայագրման նոր կարգի վերաբերյալ https://www.youtube.com/watch?v=G0SpEFkGU7k/, 1-ը՝ քաղաքաշինության բնագավառի՝ Ինքնակամ կառույցների հաշվառման նոր կարգի վերաբերյալ տեսանյութ - https://www.facebook.com/watch/?v=902000483721545/:

Կատարվել են մի շարք իրազեկող հրապարակումներ, այդ թվում.

- «ԻՐԱԶԵԿՈՒՄ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի ստուգման պահանջների վերաբերյալ»
  https://utfsib.am/post/more/476
- «Ի գիտություն ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետությունների (երրորդ երկրներ) անվավոր տրանսպորտային միջոցներ շահագործողների»
  https://utfsib.am/post/more/483

2022 թվականի ընթացքում Տեսչական մարմնի ղեկավարը, ղեկավարի տեղակալը, կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչները հարցազրույցներ, պարզաբանումներ են տվել տպագիր, առցանց լրատվամիջոցներին, նաև հեռուստաընկերություններին, ռադիոընկերություններին ընդհանուր թվով 138 հարցազրույց, (Ազատություն ռադիոկայանին, Հանրային հեռուստաընկերություն, Արմենիա հ/ը, Հայաստանի հանրային ռադիո, , «Կենտրոն», Tv5 հ/ը-ներին, armeniasputnik.am, , armtimes.com, 168.am, Hetq.am, factor.am, oragir.news, , zarkerak.am, hraparak.am, armlur.am և մի շարք այլ լրատվամիջոցների:):

Տպագիր և առցանց ԶԼՄ-երին տրվել է 60 հարցազրույց (նախորդ տարվա 21-ի փոխարեն): Կազմակերպվել և իրականացվել է 78 հեռուստառեպորտաժ: Կազմակերպվել է

13 ռադիոելույթ (նախորդ տարվա 7-ի փոխարեն)՝ Տեսչական մարմնի ղեկավարի, տեղակալների, ստորաբաժանումների ղեկավարների մասնակցությամբ։

Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել 20 աշխատանքային հանդիպում՝ պետական կառավարման համակարգի ներկայացուցիչների, տնտեսավարող սուբյեկտների հետ, որից 7-ը՝ արտագնա։

Լրատվամիջոցներից, անհատ լրագրողներից, ՀԿ-երից, այլ կառույցներից ստացվել է թվով 51 գրավոր հարցում, որոնց տրվել են պատասխաններ։ Լրատվամիջոցի հրապարակման հիման վրա տրվել է 3 պաշտոնական պարզաբանում և հայտարարություն։

Տնտեսավարողներին ուղարկվել են իրազեկող բնույթի ընդհանուր թվով 113 ծանուցում։

2022 թվականին իրականացված մշտադիտարկման արդյունքում հավաքագրվել և արխիվավորվել է 2220 լրատվական հրապարակում՝ նախորդ տարվա 1579-ի փոխարեն։ Դրանցից 1057-ը (ընդհանուր քանակի 47.6%) վերաբերում են տրանսպորտի, 394-ը (ընդհանուր քանակի 17.7%)՝ տեխնիկական և հրդեհային անվտանգության, 387-ը (ընդհանուր քանակի 17.4%)՝ քաղաքաշինության, 102-ը (ընդհանուր քանակի 4.6%)՝ հողօգտագործման, 97-ը (ընդհանուր քանակի 4.4%)՝ էներգետիկայի բնագավառներին և 183-ը (ընդհանուր քանակի 8.2%)՝ ընդհանուր բնույթի։ Կատարվել են կառավարման խորհրդի, ինչպես նաև մասնագիտական քննության հանձնաժողովի նիստերի վերաբերյալ տեղեկատվական նյութերի տեղադրում utfsib.am կայքում։

ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի և Տեսչական մարմնի իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի համատեղ հանագործակցության արդյունքում պատրաստվել է 3 ռեպորտաժ՝ ստուգումների և վերահսկողության ընթացքի մասին։

ՏՄ և «Գեոդեզիստների և հողաշինարարների համահայկական միություն» ՀԿ-ի հետ համատեղ Ագրարային համալսարանում տեղի է ունեցել կլոր սեղան-քննարկում՝ **«Ինքնակամ կառույցների հաշվառման առանձնահատկությունները»** թեմայով, որի ընթացքում ներկայացվել է 2022 թվականի հունվարի 15-ից ուժի մեջ մտած ինքնակամ կառույցների հաշվառման կարգին։

ԵՏՀ միջազգային փորձագետների առաքելության կազմի հետ կազմակերպվել է աշխատանքային հանդիպում, որի ընթացքում քննարկվել են Հայաստանի Հանրապետության աղբավայրերում 2022 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքների, հայտնաբերված խախտումների և դրանց վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների, ինչպես նաև կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ հարցեր։

«Արդյունավետ համագործակցություն կառուցապատման ոլորտում» խորագրով փակ հանդիպում-քննարկում է տեղի ունեցել պետական գերատեսչությունների փոխնախարարներ, ներկայացուցիչներ և բիզնես համայնքի միջև:

Տեղի է ունեցել «Տարածական տվյալների մասին» և «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ աշխատանքային հանդիպում-քննարկում, որին մասնակցում էր Տեսչական մարմնի ղեկավարը, ինչպես նաև շահագրգիռ այլ պետական գերատեսչությունների փոխնախարարներ և ներկայացուցիչներ:

ՏՄ ղեկավարը հանրային հաշվետվություն է ներկայացրել Հանրային հեռուստաընկերության «Բաց հարթակ» հաղորդաշարին, որի շրջանակներում խոսվել է 2021 թ. ստուգումների, իրավախախտումների և արձանագրված արդյունքների մասին:

Ստորև ներկայացվում է 2022 թվականին իրականացված խորհրդատվական և իրազեկող բնույթի աշխատանքներն ըստ ոլորտների:

<u>Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառ</u>

Նշված ժամանակահատվածում 35 հեռուստառադիոելույթ, տպագրվել է 49 հոդված, ՏՄ պաշտոնական կայքում տեղադրվել է 16 հոդված և տրամադրվել է 251 իրազեկող բնույթի գրություն, իրականացված մշտադիտարկման արդյունքում հավաքագրվել և արխիվավորվել է 394 լրատվական հրապարակում, իրազեկման նպատակով կազմակերպվել է 200 հանդիպում: Տնտեսավարողների և քաղաքացիների կողմից առավել հաճախ տրվող հարցերը վերաբերում են հրդեհային և տեխնիկական անվտանգության օրենսդրության պահանջների խախտումներին, այդ թվում՝ օբյեկտների միջև հակահրդեհային միջտարածություններին, հրդեհի ազդարարման ինքնաշխատ համակարգերի առկայության պահանջներին (ՀՀ ՏԿԱԻ նախարարի 2015թ. հունիսի 18-ի թիվ 595-Ն հրամանով հաստատված՝ հրդեհային անվտանգության կանոնների հավելված 1 գլուխ 7), կրակմարիչների քանակին (ՀՀ ՏԿԱԻ նախարարի 2015թ. հունիսի 18-ի թիվ 595-Ն հրամանով հաստատված՝ հրդեհային անվտանգության կանոնների հավելված 1 բաժին VIII):

2022 թվականի առավել կարևոր հրապարակումներն են.

- ✓ «2022թ. 1-ին եռամսյակում հանրապետությունում գործող բուժհաստատություններում իրականացված հրդեհատեխնիկական հետազոտությունների արդյունքները» - https://utfsib.am/post/more/349
- ✓ armeniasputnik.am - «Հրազդանը» սեյսմակայուն է. սեփականատերը պատմեց՝ ինչպես են պատրաստվում մեծ համերգներին» - https://cutt.ly/aJvDARo
- ✓ «ՀՀ ՔՏՀԱ Տեսչական մարմինը կանխարգելիչ ուսումնասիրություններ է կատարել մանկական ժամանցի վայրերում գործող ատրակցիոնների նկատմամբ» - https://utfsib.am/post/more/381

- ✓ armradio.am - «1 մլն դրամ տուգանք՝ ատրակցիոնի անսարքության համար. ժամանցի վայրերում ստուգումներ են իրականացվել» - https://cutt.ly/4Jjz0h9
- ✓ «Քննարկում՝ ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմնում՝ խոտածածկ և բուսածածկ տարածքներում հնարավոր հրդեհներից խուսափելուն ուղղված կանխարգելիչ միջոցառումների իրականացման թեմայով» https://utfsib.am/post/more/405
- ✓ «ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմինը հրդեհային անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ իրազեկող միջոցառում անցկացրեց Կոտայքի մարզի ճամբարներում» https://utfsib.am/post/more/410
- ✓ «ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմինը հրդեհային անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ հերթական իրազեկող միջոցառումներն անցկացրեց Լոռու մարզի ճամբարներում» https://utfsib.am/post/more/412
- ✓ «Աշխատանքային քննարկում՝ մայրաքաղաքի նախադպրոցական հաստատություններում իրականացված հրդեհատեխնիկական հետազոտությունների արդյունքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ» https://utfsib.am/post/more/423
- ✓ 1lurer.am - ««Փեթակ» առևտրի կենտրոնում մեկ տասնյակից ավելի խախտում է հայտնաբերվել» https://www.youtube.com/watch?v=vAaLlGnflqM&t=41s
- ✓ armlur.am - «ՏԵՍԱՆՅՈՒԹ. Ի՞նչ ճակատագիր է սպասվում «Փեթակ»-ին» https://armlur.am/1218053/
- ✓ armlur.am - «Ստուգումներ են իրականացվել Մալաթիայի տոնավաճառում. Ի՞նչ սպասել» https://armlur.am/1218401/
- ✓ Արմենիա հ/ը «Սուր անկյուն»- «Խիստ հայկական վարվելակերպ» https://www.youtube.com/watch?v=ry-RycWC2Xo
- ✓ 1lurer.am-«Բենզալցակայանի խախտումներն ու անորոշ ճակատագիրը» https://cutt.ly/2MXPkVJ
- ✓ factor.am - «Կարուսելն ընթացքից պոկվել է. Մոլդովայի 28-ամյա քաղաքացին գլխի վնասվածք է ստացել. ՏԵՍԱՆՅՈՒԹ» https://cutt.ly/g1gifbl
- ✓ news.5tv.am - «Կարուսելից ընկած մոլդովացին գլխուղեղի վնասվածք ունի. նրան վիրահատել են» https://www.youtube.com/watch?v=egbfuA78Gmw&t=1s
- ✓ kentron.tv - «Ինչպե՞ս է վտանգավոր ատրակցիոնը պոկվել ու ծանր վիրավորել Մոլդովայի քաղաքացուն» https://www.youtube.com/watch?v=gTX6LsKVhU4
- ✓ armeniatv.am- «Ատրակցիոնի պոկված նստատեղի հարվածից տուժած մոլդովացին ստացել է գանգուղեղային տրավմա, ոտքի կոտրվածք» https://www.facebook.com/ArmeniaTVNews/videos/1869749620024703

- ✓ 1lurer.am - «ԱԻՆ-ում ստեղծվել է հանձնաժողով «Լունապարկի» ատրակցիոնի պոկվելու դեպքը քննելու համար» https://cutt.ly/71hti59
- ✓ oragir.news - «Լունապարկում վթարված ատրակցիոնը ստուգում անցել էր. տեսչական մարմին» https://cutt.ly/71QdbeL
- ✓ hetq.am – «Պետական կառույցները չեն կարողանում փակել ապօրինի գործող բենզալցակայանը» https://hetq.am/hy/article/151318
- ✓ armeniasputnik.am - «Դատախազության պահանջով «Սուրմալու» կենտրոնում վերստուգում է իրականացվել, 60 խախտում է արձանագրվել» https://clck.ru/3357gK

2021 թվականի կազմակերպվել է խորհրդատվական և իրազեկող բնույթի 148 հանդիպում, 4 հեռուստառադիոելույթ, հարցազրույց՝ 3 տպագիր հոդված, ՏՄ պաշտոնական կայքում տեղադրվել է 15 հոդված: Լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքում արխիվավորվել է ոլորտի վերաբերյալ 77 լրատվական հրապարակում: Պատրաստվել է ոլորտային իրազեկող 2 տեսահոլովակ:

2020 թվականին ույն ժամանակահատվածում խորհրդատվական և իրազեկող բնույթի աշխատանքներ են իրականացվել զանգվածային լրատվության բոլոր հասանելի միջոցներով (17 հրապարակում ՏՄ պաշտոնական կայքում, 61 մամուլի մշտադիտարկում, 3 հեռուստառադիոելույթ): Հրդեհների նախականխման նպատակով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև տնտեսավարողներին տրամադրվել է 670 գրություն:

<u>Էներգետիկայի և էներգասպառման բնագավառ</u>

2022 թվականի ընթացքում ՏՄ պաշտոնական կայքում տեղադրվել է 6 հոդված, իրականացված մշտադիտարկման արդյունքում հավաքագրվել և արխիվավորվել է 97 լրատվական հրապարակում, իրազեկման նպատակով կազմակերպվել է 172 հանդիպում: Տնտեսավարողների և քաղաքացիների կողմից տրված հարցերը հիմնականում կապված են ՀՀ տարածքում 6 կՎ և բարձր լարման էլեկտրաէներգետիկական և միջին ու բարձր ճնշման գազամատակարարման համակարգերում նոր կառուցվող և վերակառուցվող էներգատեղակայանքների գործարկման եզրակացություն տալու գործընթացի հետ, որն իրականացվում է համաձայն 2004թ. դեկտեմբերի 14-ի «Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին կետի գ) ենթակետի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 1-ի թիվ 739-Ն և 2006 թվականի հոկտեմբերի 5-ի N 1423-Ն որոշումների:

2022 թվականին հրապարակված նյութերն են.

- ✓ «ՔՏՀԱ տեսչական մարմինը տուգանել է «Վիցի Գրուպ» ՍՊ ընկերությանը՝ կարգադրագրերի պահանջները չկատարելու համար»- http://utfsib.am/post/more/369
- ✓ «Քննարկում՝ էներգետիկ ոլորտի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի նախագծերի շուրջ» - https://utfsib.am/post/more/373
- ✓ «Աշխատանքային քննարկում՝ էլեկտրաէներգետիկայի ոլորտին առնչվող օրինագծերի մշակման թեմայով» - https://utfsib.am/post/more/375

2021 թվականին իրազեկելու նպատակով կազմակերպվել է 199 հանդիպում, Տեսչական մարմնի պաշտոնական կայքում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում հրապարակվել է 12 հաղորդագրություն: Լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքում արխիվավորվել է ոլորտի վերաբերյալ 17 լրատվական հրապարակում: Ոլորտի վերաբերյալ կազմակերպվել է 1 հեռուսատելույթ:

2020 թվականի ընթացքում իրազեկելու նպատակով կազմակերպվել է 116 հանդիպում, Տեսչական մարմնի պաշտոնական կայքում տեղադրվել է Էներգետիկայի և էներգասպառման ոլորտին վերաբերող 4 հաղորդագրություն, տպագիր լրատվամիջոցներով հրապարակվել է 30 մամուլի հաղորդագրություն, նկարահանվել է 1 տեսահոլովակ՝ https://www.youtube.com/watch?v=devd0V-NLuk:

Տրանսպորտի բնագավառ

Տեսչական մարմնի պաշտոնական կայքում տեղադրվել է 28 հոդված: Իրականացվել է խորհրդատվական և իրազեկող բնույթի 24 ելույթ տարբեր հեռուստա և ռադիո ալիքներով, կազմակերպվել 5 հարցազրույց տպագիր և առցանց լրատվամիջոցներով: Լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքում արխիվավորվել է ոլորտի վերաբերյալ 1057 լրատվական հրապարակում:

2022 թվականի առավել կարևոր հրապարակումներն են.

- ✓ «ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմինը մշտադիտարկել է բեռնափոխադրող 70 տրանսպորտային միջոց, կազմել վարչական 40 արձանագրություն»- https://utfsib.am/post/more/346
- ✓ «ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմինը տուգանել է «Մլ Մայնինգ» ՍՊ ընկերության վարորդին՝ թույլատրելի առավելագույն զանգվածը գերազանցող բեռնվածքով երթևեկելու համար»-https://utfsib.am/post/more/363
- ✓ «ՔՏՀԱՏՄ-ի կողմից 2022 թ. 1-ին եռամսյակում տրանսպորտային անվտանգության բնագավառում իրականացված ստուգումների, վերահսկողական միջոցառումների ու բացահայտված խախտումների վիճակագրություն» -https://utfsib.am/post/more/380

- ✓ «ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմինը փորձարկեց տրանսպորտային միջոցների գազաբալոնների տեղադրման, վկայագրման նոր ստուգաթերթը» https://utfsib.am/post/more/395
- ✓ «Գազով աշխատող մեքենաները մինչև օգոստոսի 1-ը պարտադիր պետք է փորձաքննություն անցնեն» https://www.facebook.com/lurer1tv/videos/1030772684239726/
- ✓ «Ստուգված գազաբալոնների 20 տոկոսը պիտանի չէ. լիցենզավորված ընկերության տնօրեն» - https://bit.ly/3LaC3Rf
- ✓ «Գերբեռնված մեքենաները՝ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ուշադրության կենտրոնում»
- ✓ https://www.facebook.com/utfsib/videos/512433853805388
- ✓ «Արյան անալիզից մինչև տեսողության ստուգում. Երևանում գործող հանրային տրանսպորտի վարորդներն անվճար ինչ բուժզննում կանցնեն» https://cutt.ly/DKP0ENZ
- ✓ 1lurer.am -«Վերջին 1,5 ամսում Երևանում երթուղայինի վարորդի մահվան երկրորդ դեպքն է գրանցվել» https://bit.ly/3swhloc
- ✓ «ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմինը տրանսպորտային միջոցների կշռում է իրականացրել Սյունիքի մարզում» https://utfsib.am/post/more/408
- ✓ «ՀՀ ՔՏՀԱՏՄ-ն Սյունիքի մարզում կշռել է ծանրաքաշ, մեծ եզրաչափերով բեռնափոխադրում իրականացնող 198 տրանսպորտային միջոց, արձանագրել՝ խախտման 6 դեպք»
- ✓ «ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմինը հանգստյան օրերին Սյունիքի մարզում կշռել է 218 ծանրաքաշ և մեծ եզրաչափերով բեռնատար տրանսպորտային միջոց» https://utfsib.am/post/more/417
- ✓ «8 օրում ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմնի կողմից Սյունիքի մարզում կշռվել է 1082 տրանսպորտային միջոց» - https://utfsib.am/post/more/418
- ✓ armradio.am-«Վարորդները դժգոհ են ճանապարհային կշեռքներից» https://cutt.ly/8NWqqXE
- ✓ 1lurer.am -«Զվարթնոցի ճանապարհին տեղադրված կշեռքը՝ վարորդների բողոքի ակցիայի պատճառ» - https://cutt.ly/FBLihF7
- ✓ 1lurer.am- «Չնայած օրենքի արգելքին, չստուգված գազաբալոնով մեքենաները սպասարկվում են. տեսչականի ստուգումները» - https://cutt.ly/tN0UTWs
- ✓ zarkerak.am - «Տնտեսվարողները տուգանվել են 200 հազարական դրամներով. ինչո՞ւ են գազալցակայանները շրջանցում օրենքը և ի՞նչ են անում պատկան մարմինները վերահսկողությունը խստացնելու համար» - https://zarkerak.am/show/41441

- ✓ hraparak.am- «Գազաբալոնների մասին օրենքի գծով տուգանվել է 2 հարյուրից ավելի գազալցակայան» - https://hraparak.am/post/40eae5bd13eff925939173e95316c83e
- ✓ 1lurer.am- «Անհատ տաքսիստները պետք է մինչև դեկտեմբերի 15-ը լիցենզավորվեն, գան օրենքի դաշտ, այլապես կտուգանվեն» - https://cutt.ly/c1qRJDd
- ✓ «ՔՏՀԱՏՄ-ն օդանավակայանում ուղևորափոխադրումներ իրականացնողների նկատմամբ վերահսկողություն է սկսել» - https://clck.ru/338pzt

2021 թվականին կատարվել է իրազեկող, նախազգուշացնող բնույթի 3 հրապարակում՝ միջմարզային և ներմարզային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող ընկերությունների կողմից փոխադրավարձի անհարկի բարձրացման, ուղևորներին, կանոնավոր ուղևորափոխադրում իրականացնող տնտեսավարողներին և ֆիզիկական անձանց՝ հանրային տրանսպորտից օգտվելիս հակահամաճարակային կանոնների պահպանման, և ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի և Ճանապարհային ոստիկանության հետ համատեղ վերահսկողական աշխատանքների վերսկսկման վերաբերյալ: Զանգվածային լրատվության հասանելի միջոցներով իրականացվել են իրարզեկող բնույթի աշխատանքներ, մասնավորապես՝ 128 հոդված Տեսչական մարմնի պաշտոնական կայքում, 13 տպագիր հարցազրույց ԶԼՄ-երին, 22 հեռուստաելույթ , 4 ուղիղ եթեր, 3 ռադիոելույթ: 2021 թվականին իրազեկման նպատակով կազմակերպվել է 372 հանդիպում: Միաժամանակ ուղարկվել են նաև 113 նախազգուշացնող բնույթի գրություններ:

2020 թվականի ընթացքում խորհրդատվական և իրազեկող բնույթի աշխատանքներ էին իրականացվել զանգվածային լրատվության բոլոր հասանելի միջոցներով: Մասնավորապես, Տրանսպորտի անվտանգության բնագավառի վերաբերյալ պատրաստվել էր 65 ռեպորտաժ, որից Հ1 հեռուստատեսությամբ՝ 21 հարցազրույց, 44-ը ռեպորտաժ՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, Տրանսպորտային անվտանգության բնագավառի վերաբերյալ ՏՄ պաշտոնական կայքում ՝ 109 հոդված, ԶԼՄ-երում հրապարակվել է 318 հոդված): Տեսչական մարմնի պաշտոնական կայքում՝ տրանսպորտի բնագավառի վերաբերյալ կատարվել էր 4 իրազեկող բնույթի հրապարակում: Ուղարկվել են նաև 861 նախազգուշացնող բնույթի գրություններ և 1585 ծանուցումներ:

<u>Քաղաքաշինության բնագավառ</u>

Հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի պաշտոնական կայքում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում հրապարակվել է 17 հաղորդագրություն:

Կազմակերպվել է 6 հարցազրույց՝ տպագիր և առցանց լրատվամիջոցներով, 11 հեռուստաելույթ և 2 ռադիոելույթ: Պատրաստվել և նկարահանվել է 1 իրազեկող բնույթի տեսահոլովակ՝ Ինքնակամ կառույցների հաշվառման նոր կարգի վերաբերյալ https://www.facebook.com/watch/?v=902000483721545

Հանրության կողմից առավել հաճախ տրվող հարցերը վերաբերում են.

- շենք, շինությունների, ինչպես նաև հարակից հողամասերում կառուցվող շենքերի միջև եղած հեռավորություններին՝ հարաչափերին («Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի՝ ՀՀՇՆ 30-01-2014, 10-րդ գլուխ, 76, 79, 80, 81 կետեր և ՀՀՇՆ 30-01-2014, 26-րդ գլուխ, 439-446 կետեր).
- բնակարանների լուսավորության և ինսոլացիոն հաշվարկներին. (Արհեստական և բնական լուսավորում ՀՀՇՆ 22-03-2017 շինարարական նորմեր).
- պատուհաններից դեպի հարևանի տարածք տեսանելիության հետ կապված հարցեր («Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի՝ ՀՀՇՆ 30-01-2014, 10-րդ գլուխ, 79, 80, 81 կետեր).
- կառուցապատողների և հարևան շենքերի սեփականատերերի միջև գրավոր համաձայնությունների հետ կապված հարաբերություններին («Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի՝ ՀՀՇՆ 30-01-2014, 10-րդ գլուխ, 81 կետ և ՀՀՇՆ 30-01-2014, 26-րդ գլուխ, 439-446 կետեր).
- շենք, շինությունների նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությանը (ՀՀ կառավարության 02.02.2002թ. N88 որոշմամբ հաստատված կարգի 3.1 և 3.2 կետեր):

2022 թվականի առավել կարևոր հրապարակումներն են.

- ✓ «Քաղաքացին ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ ՔՏՀԱ տեսչական մարմնի տեսուչների կողմից ստուգումների իրականացմանը խոչընդոտելու համար» - https://utfsib.am/post/more/344
- ✓ ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմինը տուգանել է կառուցապատողին՝ համապատասխան լիցենզիա չունեցող անձանց միջոցով շինարարություն իրականացնելու համար»- https://utfsib.am/post/more/351
- ✓ «Հարցուպատասխան՝ «Ճարտարապետահատակագծային առաջադրանք» փաստաթղթի վերաբերյալ»
- ✓ https://www.facebook.com/utfsib/posts/pfbid0Wamn5TaW1SVPAXnMBbwoNuYrUaP2GupYQ6qpB7dBiK4Bm59KTdLox4nwhPRJrh4pl

- ✓ «Ծիծեռնակաբերդի խճուղին երկկողմանի փակ է. իրականացվում են չափագիտական ստուգումներ» - https://168.am/2022/05/25/1709631.html
- ✓ «Նորակառույց՝ երկու բազմահարկի արանքում. բնակիչները բողոքում են, կառուցապատողը՝ հակադարձում» - https://cutt.ly/pJ2vLKq
- ✓ 20 ՀՈՒԼԻՍԻ- «ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմինը Ծիծեռնակաբերդի խճուղում շինարարության ընթացքում թույլ տված խախտումների հիմքով դիմել է ՀՀ Գլխավոր դատախազություն» - https://utfsib.am/post/more/407
- ✓ «ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմինն Արարատի մարզում կասեցրեց ապօրինի շինարարությունը և ապամոնտաժեց ինքնակամ կցակառույցը» https://www.facebook.com/utfsib/posts/pfbid02wTYeqgUwGciLeLxpKeiGwd4jpsCu8NHWa7QqUaMjubPhsoKNdubkQrGgjXkUWFtnl
- ✓ «ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմնի ղեկավար Գեղամ Շախբազյանն այցելեց Լոռու մարզ և ծանոթացավ սուբվենցիոն ծրագրով իրականացվող շինարարական աշխատանքներին» - https://utfsib.am/post/more/400
- ✓ armeniasputnik.am- «Գրեթե բոլոր շինհրապարակներում կարելի է թերություններ գտնել. տեսչական մարմնի աշխատակից» - https://clck.ru/32uVvV

2021 թվականի ընթացքում իրազեկող բնույթի աշխատանքներ են իրականացվել զանգվածային լրատվության միջոցներով, այն է՝ հեռարձակվել է 9 հեռուստառեպորտաժ և 1 ռադիոելույթ: Տպագիր ԶԼՄ-ին տրվել է 2 հարցազրույց: ՏՄ պաշտոնական կայքում հրապարակվել է 12 հոդված: Լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքում ոլորտի վերաբերյալ արխիվավորվել է 255 հրապարակում:

2020 թվականի նույն ժամանակահատվածում խորհրդատվական և իրազեկող բնույթի աշխատանքներ են իրականացվել զանգվածային լրատվության բոլոր հասանելի միջոցներով (ՏՄ պաշտոնական կայքում՝ 9 հոդված, մամուլում՝ 43 հոդված, հեռաստառադիոելույթ՝ 3 հարցազրույց):

<u>Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառ</u>

Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից 2022 թվականին կատարված ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ ըստ անհրաժեշտության ստուգումների հետ միաժամանակ, համայնքների ղեկավարներին և համապատասխան բաժինների պաշտոնատար անձանց տրվել են ոլորտի հետ կապված իրենց հետաքրքրող հարցերի պատասխաններ, ինչպես նաև օրենսդրական պահանջներին վերաբերվող խորհրդատվություններ: Հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի

պաշտոնական կայքում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում հրապարակվել է 6 հաղորդագրություն, կազմակերպվել 3 հեռուստաելույթ, մշտադիտարկվել ոլորտին վերաբերող 102 լրատվական հրապարակում:

2022 թվականի առավել կարևոր հրապարակումներն են.

- ✓ «ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմինը ՀՀ Արարատի մարզի Ուրցաձոր համայնքում հողային օրենսդրության պահանջների բազմաթիվ խախտումների հիմքով դիմել է ՀՀ գլխավոր դատախազություն»- https://utfsib.am/post/more/332
- ✓ «Աշխատանքային քննարկում՝ օրենսդրական մի քանի նախագծերի վերաբերյալ» - https://utfsib.am/post/more/378
- ✓ «Հողերի նպատակային և գործառնական օգտագործման խախտումների մասին։ https://www.youtube.com/watch?v=VFlcx1jn7jc

8. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառ

1. Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ առաջարկություն է ներկայացվել Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին, Հրդեհային անվտանգության մասին, Դատական ակտերի հարկադիր կատարման մասին օրենքներում և հարակից օրենքներում լրացումներ կատարելու մասին: **Առաջարկի բովանդակությունը և ակնկալվող արդյունքը.**

Առաջարկվել է Տեսչական մարմնի կողմից կայացվող՝ տեխնիկական կամ հրդեհային վտանգ ներկայացնող օբյեկտների շահագործման արգելման վերաբերյալ վարչական ակտերի (կարգադրագրեր/որոշումներ) պահանջների կատարումը վերապահել ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը (հաշվի առնելով նշված մարմնի լիազորությունների շրջանակը և գործիքակազմը):

Համապատասխան լրացումները հնարավորություն կտան տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտներում լիարժեք դարձնել վերահսկողությունը, նվազեցնել անձանց կյանքին, գույքին և շրջակա միջավայրին սպառնացող վտանգների ռիսկը՝ այդ ռիսկի նվազեցման պահանջը չթողնելով միայն տնտեսավարողների հույսին:

2. Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ ներկայացվել է առաջարկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգիրք) փոփոխություն կատարելու մասին: Մասնավորապես, առաջարկվել է Օրենսգրքի 187-րդ հոդվածի 3-րդ մասում հարյուրհինսնապատիկի բառը փոխարինել հարյուրհինսնապատիկից հինգհարյուրապատիկի բառերով:

Փոփոխության արդյունքում ՔՏՀԱ տեսչական մարմնին իրավասություն կվերապահվի վարչական պատասխանատվության միջոց կիրառել հրդեհային անվտանգության բնագավառի բոլոր նորմատիվ իրավական ակտերի պահանջների խախտումների համար, վերահսկողությունը կլինի նպատակային, կունենա համապատասխան հետևանքներ, իսկ վարչական պատասխանատվության նախատեսումը կկրի նաև կանխարգելիչ բնույթ, նշանակված տուգանքները կապահովեն վարչական մարմնի կողմից հետապնդվող նպատակի հետ համաչափություն և կապ, անհատական մոտեցում տնտեսավարողների նկատմամբ, անձի՝ սահմանադրորեն երաշխավորված լսված լինելու իրավունքը կծառայի իր նպատակին. տուգանք նշանակելիս, հիմք ընդունելով Օրենսգրքի 33-րդ և 34-րդ հոդվածները, հաշվի կառնվեն իրավախախտի մեղքը, գույքային դրությունը, արարքը մեղմացնող և ծանրացնող այլ հանգամանքներ:

3. Լիազոր մարմին է ներկայացվել առաջարկ «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին օրենքում փոփոխություն կատարելու մասին: Նախատեսվում է նշված օրենքն ամբողջությամբ խմբագրել՝ հստակեցնելով ինչպես արտադրական վտանգավոր օբյեկտների դասակարգումը, այնպես էլ վարչական տույժերի չափերը:

<u>Տեխնիկական և հրդեհային անվտանգության, քաղաքաշինության բնագավառներ</u>

Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ առաջարկություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում (այսուհետ՝ Օրենք) փոփոխություններ և լրացում կատարելու մասին: **Առաջարկի բովանդակությունը և ակնկալվող արդյունքը.**

Առաջարկվել է լրացում կատարել Օրենքի 2.1-ին հոդվածում, փոփոխություններ կատարել Օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածներում:

Նախագծի ընդունման արդյունքում Տեսչական մարմինը հնարավորություն կունենա քաղաքաշինության, հրդեհային և տեխնիկական անվտանգության ոլորտներում ստուգումներն իրականացնել ոչ միայն սուբյեկտների մոտ, այլև օբյեկտներում, առանց ստուգման մասին նախնական ծանուցման՝ այդ կերպ ապահովելով ստուգումների բնականոն ընթացքը և նվազագույնի հասցնելով անձանց կյանքին, գույքին և շրջակա միջավայրին սպառնացող վտանգը:

<u>Տրանսպորտի բնագավառ</u>

1. Հաշվետու ժամանակահատվածում առաջարկվել է ՀՀ կառավարության 2019 թվականի օգստոսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին N 1025-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ: **Առաջարկի բովանդակությունը և ակնկալվող արդյունքը.** *Նախագծով վերը նշված որոշմամբ հաստատված 1-ին ստուգաթերթը համապատասխանեցվել է 2020 թվականի դեկտեմբերի 3-ին ընդունված N 1994-Ն որոշմանը՝ ապահովելով վերահսկողության անխոչընդոտ իրականացումը կանոնավոր ուղևորփոխադրումներ իրականացնող տնտեսավարողների մոտ:*

2. Առաջարկվել է ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը

կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և լրացում՝ տեխնիկական զննման կայանների և գազաբալոնների տեղադրման և վկայագրման կայանների ռիսկայնության հաշվարկի վերաբերյալ: Առաջարկի ընդունումը հնարավորություն կընձեռի տվյալ ոլորտներում կատարել պլանային ստուգումներ՝ նպատակաուղղելով դրանք դեպի առավել ռիսկային սուբյեկտներ/օբյեկտներ:

3. Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ ներկայացվել է առաջարկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 150.3-րդ հոդվածում փոփոխություն կատարելու մասին՝ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներով թույլատրելի առավելագույն զանգվածը գերազանցող, չմասնատվող և (կամ) մեծ եզրաչափերով բեռներ փոխադրող տրանսպորտային միջոցներով երթևեկելու դեպքում տուգանքի չափն ըստ բեռնվածքի սահմանելու վերաբերյալ: Միաժամանակ առաջարկվել է մշակել թույլատրելի առավելագույն զանգվածը գերազանցող, չմասնատվող և (կամ) մեծ եզրաչափերով բեռներ փոխադրող տրանսպորտային միջոցների բեռնաթափման կարգ սահմանող Կառավարության որոշում:

9. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառ

1. 2022թ. ընթացքում իրականացվել է 683 հրդեհատեխնիկական հետազոտություն, որից 338-ը բժշկական սպասարկում իրականացնող առողջապահական օբյեկտներում: Հետազոտությունների արդյունքում 328 բուժ. հաստատություններում բացահայտվել է ընդհանուր առմամբ 2019 խախտում: 2022 թվականի մայիսի 18-ի թիվ ՀՆԶ/04.1/83-2022 հանձնարարականով կատարվել են հրդեհատեխնիկական հետազոտություններ 189 նախակրթական հաստատություններում: Հետազոտությունների արդյունքում 188 նախակրթական հաստատություններում բացահայտվել են 1337 տարաբնույթ խախտումներ: Հաստատությունների տնօրեններին տրամադրվել է մասնագիտական խորհրդատվություն և տրվել են բանավոր ցուցումներ՝ բացահայտված խախտումների վերացման ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու համար: Անհրաժեշտ է պարզել նաև ՀՀ տարածքում գործող բարձրագույն ուսումնական հաստատությունների, ինչպես նաև մարդկանց զանգվածային ներկայության վայրերի թատրոններ, կինոթատրոններ, համերգասրահներ և համանման այլ օբյեկտներ համապատասխանության աստիճանը գործող նորմերի հակահրդեհային պահանջներին:

2. Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին ՀՀ օրենքում փոփոխությունների անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնցից կարևորագույնը արտադրական վտանգավոր օբյեկտների ըստ իրենց ծավալների և վտանգավորության տարանջատումն է և արտադրական վտանգավոր սարքավորում սարք հասկացության ընդգրկումը: Նախատեսվում է նաև վարչական տույժերի չափերի տարանջատում՝ կախված վտանգավոր օբյեկտի սարքի ծավալներից և վտանգավորությունից:

3. ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի թիվ 71-Ն որոշման 3-րդ հավելվածով մի շարք ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնող լիազոր մարմին է սահմանվել Տեսչական մարմինը: Ռիսկի վրա հիմնված ստուգումներ իրականացնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել տեխնիկական կանոնակարգերը, ներկայացնել համապատասխան առաջարկություններ ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը

կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն և ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» թիվ 1025-Ն որոշումների մեջ համապատասխան լրացումներ կատարելու համար:

4. ՀՀ վարչապետի 2020 թվականի օգոստոսի 25-ի թիվ 952-Լ որոշմամբ Տեսչական մարմնի լիազորությունները համալրվել են ևս մեկ գործառույթով, այն է՝ տիեզերական գործունեության բնագավառում օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացմամբ, այդ թվում՝ նաև ստուգումների միջոցով, որը ենթադրում է ստուգաթերթերի և ռիսկայնության հաշվարկի մեթոդաբանության առկայություն:

5. Երեխաների անվտանգությունն ապահովելու, ծանր հետևանքով հրդեհներից խուսափելու նպատակով Տեսչական մարմնի մասնագետների կողմից ամառային դպրոցական արձակուրդների ժամանակաշրջանում իրազեկման աշխատանքներ են իրականացվում ՀՀ տարածքում գործող մանկական հանգստյան ճամբարներում: Միաժամանակ նախատեսվում է իրականացնել նպատակային հրդեհատեխնիկական հետազոտություններ մայրաքաղաքի զվարճանքի բացօթյա վայրերում ատրակցիոնների և այլ սարքավորումների համապատասխանությունը գործող նորմերին վերահսկելու նպատակով:

<u>Էներգետիկայի և էներգասպառման բնագավառ</u>

1. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» («ՀԷՑ») ՓԲԸ-ի կողմից օգտագործվում են մի քանի 6, 10, և 0.4 կՎ էլեկտրատեղակայանքներ, որոնք ներառված չեն ընկերության հաշվեկշռում, հետևաբար, սահմանված կարգով չեն իրականացվում տեխնիկական սպասարկման, պլանային նորոգման, էներգահամակարգի հարաչափերին չհամապատասխանող սարքավորումների վերականգնման, արդիականացման կամ փոխարինման աշխատանքներ: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում դրանց անմխիթար վիճակի համար, սակայն դրանք օգտագործվում են ընկերության կողմից իր սպառողներին (բաժանորդներին) էլեկտրաէներգիա մատակարարելու համար: Նշված էլեկտրատեղակայանքները նախկինում պատկանել են այգեգործական ընկերություններին կամ այլ կազմակերպություններին, իսկ այժմ դրանց սեփականատերն անհայտ է: Առկա են նաև փաստացի տնտեսվարող սուբյեկտներին պատկանող ենթակայաններ, որոնց էլեկտրատեղակայանքներն առանց համատեղ շահագործման և անվտանգության կանոնների պահպանման պարտավորությունների վերաբերյալ կնքված պայմանագրերի միաժամանակ օգտագործվում են նաև «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից իր սպառողներին (բաժանորդներին) էլեկտրամատակարարումն

ապահովելու համար: Ստեղծված իրավիճակը մեծ ռիսկեր է պարունակում՝ սպառնալով մարդկանց կյանքին, գույքին և շրջակա միջավայրին:

2. Էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների մասնագիտական քննության իրականացման համար տեխնիկական կանոնակարգերի նորմերի խախտման բացահայտման և համապատասխան եզրակացություն կազմելու նպատակով Տեսչական մարմնին իրավական ակտերով վերապահված գործառույթը սահմանված կարգով և որակով չի իրականացվում համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող մասնագետների անբավարարության պատճառով, որի արդյունքում անհնար է դառնում սահմանված կարգով համալրել Տեսչական մարմնի կողմից պատահարների մասնագիտական քննություններն իրականացնող հանձնաժողովների կազմը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ապահովել տնտեսվարող սուբյեկտների կողմից իրականացվող պատահարների մասնագիտական քննությունն իրականացնող հանձնաժողովների կազմերում Տեսչական մարմնի մասնագետների ներգրավումը:

3. ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի «Հայաստանի Հանրապետության մի շարք որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 634-ն որոշման համաձայն 2023 թվականի ապրիլի 23-ից ուժը կկորցնեն էներգետիկայի և էներգասպառման ոլորտի թվով 17 տեխնիկական կանոնակարգեր, որոնք հիմք են հանդիսանում Տեսչական մարմնի էներգետիկայի և էներգասպառման ոլորտում վերահսկողություն իրականացման համար: Տվյալ տեխնիկական կանոնակարգերը նոր իրավական ակտերով փոխարինվելուց հետո, ուժը կորցրած կճանաչվեն նաև «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» թիվ 1025-Ն որոշման 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ հավելվածները:

Տրանսպորտի բնագավառ

1. Ավտոբուսներով (միկրոավտոբուսներով) միջպետական ուղևորափոխադրումների իրականացումը կանոնակարգվում է ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1587-Ն որոշման պահանջներով: Անհրաժեշտ է ապահովել բացառապես տվյալ միջպետական երթուղու մրցույթով ընտրված տրանսպորտային միջոցների շահագործումը, ուղևորների անվտանգությունը և սպասարկման պատշաճ մակարդակը:

2. Տրանսպորտային միջոցների կուտակման վայրերից իրականացվող տաքսամոտորային ուղևորափոխադրումների խնդիրները պայմանավորված են առանց

լիցենզիայի, առանց համապատասխան կահավորման, առանց սակաչափիչի կամ էլեկտրոնային հավելվածով գործող գնացուցակի ծառայության մատուցմամբ:

3. ՀՀ տարածքում Հայավտոկայարան ՓԲ ընկերության ենթակայության ավտոկայարաններում, ավտոկայաններում և երթակարգավարական կետերում միջմարզային, ներմարզային, կանոնավոր ուղևորափոխադրումների բնագավառի խնդիրները վերաբերում են երթուղիների սպասարկման չվացուցակներով հաստատված փոխադրումների կազմակերպման ժամային գրաֆիկի պահպանման, ավտոկայարանային ծառայությունների մատուցման, ուղեբեռի ժամանակավոր պահպանման, ուղևորների նստեցման և երթևեկության անվտանգության ապահովման կազմակերպման գործընթացներին:

4. 2022 թվականի ընթացքում ներհամայնքային կանոնավոր երթուղիների պատշաճ սպասարկումն ապահովելու համար Երևան քաղաքում և ՀՀ մյուս խոշոր բնակավայրերում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում կազմվել է տրանսպորտի բնագավառում վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 279 արձանագրություն, սակայն, էական բարելավում չի արձանագրվել՝ թերի գործիքակազմի պատճառով: Անհրաժեշտ է լրացուցիչ և/կամ ավելի խիստ վերահսկողական մեխանիզմների կիրառում (օրինակ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի համապատասխան հոդվածներով սահմանված տույժերի չափերի բարձրացում):

5. 2022 թվականի ընթացքում հանրությունից ստացված դիմում-բողոքներում բարձրացված հարցերը հիմնականում վերաբերում են միջմարզային կանոնավոր երթուղիների սպասարկման չվացուցակների անհստակությանը, զուգահեռ շահագործվող երթուղիների չվացուցակների կրկնությանը, փոխադրողների կողմից չվացուցակների պահանջների պարբերաբար խախտումներին, մրցույթային հանձնաժողովի սահմանված փոխադրավարձի գերազանցմամբ երթուղիների սպասարկման իրականացմանը, ինչպես նաև որոշ կանոնավոր երթուղիների ուղեգծերով բազմաթիվ ոչ կանոնավոր և ապօրինի տաքսամոտորային տրանսպորտային միջոցներով ուղևորափոխադրումների իրականացմանը:

6. Ծանրաքաշ և (կամ) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով երթևեկման գործընթացների ռիսկայնությունը պայմանավորված է թույլատրելի բեռնվածության զանգվածի գերազանցման հետ, ինչն առաջացնում է ավտոճանապարհների ասֆալտապատ ծածկույթի լուրջ վնասվածքներ, ինչպես նաև պարունակում է լրջագույն ռիսկեր՝ կապված տրանսպորտային միջոցի անվտանգ երթևեկության հետ:

7. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի միջպետական երթուղիների ուղևորների տոմսավորումն իրականացվում է բացառապես ավտոկայարանների և ավտոկայանների, ինչպես նաև դրանց հետ պայմանագիր ունեցող այլ

կազմակերպության տոմսարկղերից: Օրենսդրության սույն պահանջի անտեսումն առաջացնում է միջպետական տվյալ երթուղով մեկնող ուղևորների պատշաճ սպասարկմանը և անվտանգության ապահովմանն առնչվող խնդիրներ, ինչպես նաև հավասար մրցակցային պայմանների ապահովում:

8. Երկաթուղային տրանսպորտով փոխադրման գործընթացի հետ կապված տեխնիկական միջոցների շահագործման և երթևեկության ոլորտում ռիսկայնությունը կապված է երկաթուղային տրանսպորտի շահագործման և երթևեկության անվտանգության կանոնների խախտումների հետ, բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման և վերացման, բեռնատար վագոնների ու բեռնարկղերի բեռնման ու բեռնաթափման աշխատանքների ոչ ճիշտ կազմակերպման հետ: Տվյալ գործառույթը հնարավոր է կատարել միայն համապատասխան օրենսդրական փոփոխությունների և համապատասխան մասնագետների համալրման դեպքում:

9. Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման կայանների գործունեության ռիսկերն ուղղակիորեն կապված են տրանսպորտային միջոցների շահագործման և փոխադրումների իրականացման անվտանգության կանոնների խախտումների հետ: ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 2195-Ն որոշմամբ հաստատվեց տեխնիկական զննության անցկացման կայանների ստուգման ստուգաթերթը, սակայն մինչ օրս չի հաստատվել դրանց ռիսկայնության հաշվարկի մեթոդաբանությունը, ինչի հետևանքով տվյալ ոլորտում Տարեկան ծրագրով ստուգումներ չեն նախատեսվել:

10. 2021 թվականի դեկտեմբերի 9-ից ուժի մեջ են մտել, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցներում տեղադրվող գազաբալոնային սարքավորումների տեղադրմանը, գազաբալոնների պարբերական վկայագրմանը և դրանց լցավորմանը ներկայացվող պահանջների նկատմամբ վերահսկողությունն իրականացնելու վերաբերյալ ՀՀ կառավարության 1998-Ն և 2011-Ն որոշումները, իսկ 2022 թ. օգոստոսի 4-ից ուժի մեջ է մտել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության ստուգման ստուգաթերթը, սակայն մինչ օրս չի հաստատվել դրանց ռիսկայնության հաշվարկի մեթոդաբանությունը, ինչի հետևանքով տվյալ ոլորտում Տարեկան ծրագրով ստուգումներ չեն նախատեսվել:

<u>Քաղաքաշինության բնագավառ</u>

1. 2021-2022 թվականների ընթացքում Տեսչական մարմնի կողմից քաղաքաշինական օբյեկտներում իրականացված ընթացիկ ստուգումների արդյունքում արձանագրվել է այն

փաստը, որ համայնքների կողմից քաղաքաշինական փաստաթղթերը տրամադրվում են կառուցապատողներին ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներով, որի պատճառով կառուցապատողների համար հետագայում շինարարական աշխատանքներն ավարտելու և ավարտված շինարարական օբյեկտի հանձնաժողովին մասնակցության շրջանակներում Տեսչական մարմնին դիմելու ժամանակ առաջանում են մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ կառուցվող օբյեկտի ռիսկայնության աստիճանը ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված պահանջների խախտումով քաղաքաշինական փաստաթղթերի տրամադրման դեպքում Տեսչական մարմնի կողմից արձանագրվում է չլիցենզավորված գործունեության դեպքեր, որի համար կառուցապատողի նկատմամբ կիրառվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված վարչական պատասխանատվության միջոցներ: Բացահայտվում են նաև ՀՀ համայնքների կողմից քաղաքաշինական փաստաթղթերի քաղաքաշինության բնագավառի իրավական ակտերի և նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջների խախտմամբ աշխատանքային նախագծերի համաձայնեցման ու տրամադրման դեպքեր, որոնք հետագայում կարող են բերել անդառնալի հետևանքների:

2. Տեսչական մարմնի կողմից ընթացիկ ստուգումների ժամանակ քաղաքաշինական օբյեկտներում քաղաքաշինական սուբյեկտների կողմից իրականացվող քաղաքաշինական գործունեության ընթացքում բացահայտվում են բազմաթիվ տարաբնույթ թերություններ և խախտումներ, որոնք կրկնվում են նույն քաղաքաշինական գործունեության սուբյեկտի կողմից տարբեր քաղաքաշինական օբյեկտներում: Տեսչական մարմնի կողմից քաղաքաշինական գործունեության սուբյեկտների նկատմամբ միայն վարչական պատասխանատվություն կիրառելը չի նպաստում սուբյեկտների կողմից իրականացվող քաղաքաշինական գործունեության բարելավմանը և մասնագիտական որակի բարձացմանը:

3. Առկա է մասնագետների արհեստավարժության խնդիր՝ հատկապես ստուգում իրականացնելու հարցում: Վերահսկողական աշխատանքների ծավալը և արդյունավետությունը, քաղաքաշինության բնագավառում հասարակության անվտանգությունն անմիջականորեն կախված են հսկողություն իրականացնող մասնագետների արհեստավարժությունից:

4. Տեսչական մարմնի ուշադրության կենտրոնում շարունակում է մնալ համայնքներում կառուցապատողների կողմից կառուցվող հասարակական նշանակության օբյեկտների և գոյություն ունեցող վարչական շենքերի, թատրոնների, թանգարանների, պետական հիմնարկների, կինոթատրոնների և այլ պետական կառավարման և տեղական կառավարման հիմնարկների հաշմանդամ և սակավաշարժ խմբերի տեղաշարժման մատչելիության ապահովումը:

5. Տեսչական մարմնի կողմից համաձայն «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի դրույթների վերահսկողություն է իրականացվում քաղաքաշինական օբյեկտներում և ճանապարհաշինական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների կողմից պետական սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացվող քաղաքաշինական գործունեության նկատմամբ՝ այդ ծրագրերով նախատեսված աշխատանքների ողջ ժամանակահատվածում՝ դրանց կատարման որակի նկատմամբ վերահսկողությունն ապահովելու նպատակով: Քաղաքաշինական սուբյեկտների կողմից իրականացվող քաղաքաշինական գործունեության ընթացքում բացահայտվում են բազմաթիվ տարաբնույթ թերություններ և խախտումներ, որոնք կրկնվում են նույն քաղաքաշինական գործունեության սուբյեկտի կողմից տարբեր քաղաքաշինական օբյեկտներում:

Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառ

2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված, ինչպես նաև դիմումների, նախաքննական մարմինների որոշումների հիման վրա և ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ իրականացված ստուգումների վիճակագրությունը վկայում է, որ հողերի նպատակային նշանակության, գործառնական նշանակության, ապօրինի զավթման, հրապարակային սակարկությունների գործընթացի խախտումները, պաշտոնեական կեղծիքների եղանակով չմասնավորեցվող հողամասերի օտարումը, նույն եղանակով ճարտարապետահատակագծային առաջադրանքների և շինարարության թույլտվությունների տրամադրման դեպքերը նվազել են, սակայն շարունակում են մնալ ռիսկային ուղղություններ:

10. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կատարողականի գնահատումը կատարվել է ղեկավարվելով Տեսչական մարմինների մասին 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-254-Ն օրենքի 11-րդ հոդվածի և 15-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթամասի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի Տեսչական մարմինների գործունեության կատարողականի գնահատման սկզբունքները, չափորոշիչները և կարգը հաստատելու մասին № 693-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները և հաշվի առնելով Տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 08 որոշմամբ հաստատված «ՀՀ Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատման մեթոդաբանությունը»:

Տեսչական մարմնի կատարողականի գնահատման չափորոշիչներն են՝

1. նպատակի չափորոշիչներ,
2. գործընթացի չափորոշիչներ,
3. արդյունքի չափորոշիչներ:

1. ՆՊԱՏԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

1.1) ***Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը*** գնահատելու համար յուրաքանչյուր ոլորտի համար վերլուծվել է հաշվետու ժամանակահատվածում տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների ընդհանուր կշիռը:

Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակի գնահատումը կատարվում է հաշվետու ժամանակահատվածում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումարի և վերահսկողության ընթացքում նախատեսված ստուգաթերթերի ընդհանուր կշիռների հանրագումարի հարաբերությամբ:

Այսպիսով, 2022 թվականին Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը ***0.2*** է:

Պատկերն ըստ ոլորտների՝



	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ	
		2021 թվական	2022 թվական
1	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	0.2	0.3
2	Էներգետիկայի	0.4	0.5
3	Տրանսպորտի անվտանգության	0.1	0.06
4	Քաղաքաշինության	0.05	0.06

**Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտում իրականացվող ստուգումները և վերահսկողությունը չեն կարգավորվում «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքով. Վերոգրյալ գործառույթների իրականացումը կարգավորվում է «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին», «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» օրենքներով. ուստի ոլորտի ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայության և գնահատման հաշվարկ չի կատարվել:*

1.2) ***Ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը*** գնահատելու համար վերլուծվել է հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի կողմից ոլորտի առավել ռիսկային բնագավառներում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների ընդհանուր կշիռը:

Ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը գնահատվում է հաշվետու ժամանակահատվածում ոլորտի առավել ռիսկային բնագավառներում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումարի և վերահսկողության ընթացքում նախատեսված ստուգաթերթերի ընդհանուր կշիռների հանրագումարի հարաբերությամբ:

2022 թվականին տեսչական մարմնի ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը ***0.2*** է:

Պատկերն ըստ ոլորտների՝



	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ	
		2021 թվական	2022 թվական
1	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	0.2	0.3
2	Էներգետիկայի	0.4	0.5
3	Տրանսպորտի	0.1	0.1
4	Քաղաքաշինության	0.04	0.04

1.3) ***Ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.***

2022 թվականի համար ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար աշխատանքներն իրականացրել են Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչության հաստիքացուցակով նախատեսված 7 աշխատակիցները՝ որոնցից մեկ հաստիքը համալրվել է 16.09.2022թ.-ին և թափուր է դարձել 12.12.2022թ.-ին:

Ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար լրացուցիչ ֆինանսական միջոցներ և մարդկային ռեսուրսներ չեն հատկացվել:

1.4) ***Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.***

Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցառումներն իրականացվել են համապատասխան ոլորտային ստորաբաժանումների, ինչպես նաև

իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի աշխատակիցների միջոցով:

Բաժնի 5 հաստիքներից համալրված է 3-ը, բաժնի աշխատանքների իրականացմանը ներգրավված է նաև 1 փորձագետ:

Հաշվետու ժամանակաշրջանում՝

- Իրականացվել է անվտանգության կանոնների պահպանման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ իրազեկիչ աշխատանքներ և դրանց վերաբերյալ պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում տեղադրվել է մամուլի 89 հաղորդագրություն:
- Պատրաստվել է իրազեկող 8 հրապարակում և 4 իրազեկող տեսանյութ
- Կազմակերպվել է Տեսչական մարմնի ղեկավարի և ղեկավարի տեղակալների, կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարների և մասնագետների կողմից թվով 60 հարցազրույցի և 3 պարզաբանումների տրամադրում, 13 ռադիոելույթ:
- Իրականացվել է թեժ գծով ստացված 269 զանգերի խորհրդատվություն և պարզաբանում:
- Ֆինանսական ռեսուրսների բացակայության պատճառով հաշվետու ժամանակահատվածում սոցիալական գովազդային պաստառներ չեն պատրաստվել:
- Հանրության շրջանում անվտանգության ուղղված իրազեկման աշխատանքների մակարդակի բարձրացման նպատակով հեռահաղորդակցության ծառայություններ մատուցող «Թիմ Տելեկոմ Արմենիա», «Վիվա ՄՏՍ», «Յուքոմ» ընկերությունների մարկետինգի և գովազդի բաժինների և Տեսչական մարմնի իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի միջև տեղի ունեցած քննարկումների արդյունքում ձեռք է բերվել համաձայնություն՝ հրդեհային անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ հաղորդագրություններ են ուղարկել իրենց բաժանորդներին (յուրաքանչյուր օպերատոր իրազեկող հաղորդագրությունն ուղղարկել է 2.5 միլիոն բաժանորդի): Այս աշխատանքները կապի 3 օպերատորների կողմից իրականացվել են բացառապես անվճար:

- Հանրային, «Կենտրոն» հեռուստաընկերությունների, freenews.am կայքի հետ ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն՝ հրդեհային անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ տեսանյութերը հեռարձակվել է 3 ամիս շարունակ՝ օրը առնվազն 3-4 անգամ:

Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար Տեսչական մարմնի կողմից ֆինանսական լրացուցիչ միջոցներ չեն հատկացվել:

1.5) ***Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ համապատասխան ոլորտների քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացված առաջարկների քանակը.***

Հաշվետու եռամսյակի ավարտի դրությամբ Տեսչական մարմնի կողմից ապահովվել է մասնակցություն թվով 24 իրավական ակտի մշակման աշխատանքներին՝ ներկայացվել են համապատասխան առաջարկություններ և մասնագիտական կարծիքներ, որոնցից 1-ը տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտում, 17-ը էներգետիկայի ոլորտում, 1-ը քաղաքաշինության ոլորտում, 5-ը ընդհանրական՝ մի քանի ոլորտներով միասին:

2. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

2.1) Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը գնահատելու համար վերլուծվել է հաշվետու ժամանակահատվածում տարեկան ծրագրով չնախատեսված, սակայն Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների միջին տևողությունը:

2022 թվականին տեսչական մարմնի կողմից ըստ անհրաժեշտության իրականացրած ստուգումների միջին տևողությունը ***2.9*** օր է:

Պատկերն ըստ ոլորտների՝



	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ	
		2021 թվական	2022 թվական
1	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	3.1	3.6

2	Էներգետիկայի	0	0
3	Տրանսպորտի	0	2.5
4	Քաղաքաշինության	1.6	2.5
5	Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման	2.8	2.9

2.2) Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ չափորոշչի գնահատման համար վերլուծվել է բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում հաշվետու ժամանակահատվածում կատարված ստուգումների քանակի և Տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրում նույն ժամանակահատվածում ընդգրկված և իրականացված ստուգումների քանակի հարաբերությունը։

2022 թվականին բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ ***1*** է։

Պատկերն ըստ ոլորտների՝



	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ	
		2021 թվական	2022 թվական
1	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	1	1
2	Էներգետիկայի	1	1

3	Տրանսպորտի	0.6	0.8
4	Քաղաքաշինության	1	1

2.3) Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողությունը հաշվարկվել է ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների ընդհանուր տևողության և դրանց քանակի հարաբերությամբ:

2022 թվականին ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների միջին տևողությունը կազմել է ***4.2*** օր:

Պատկերն ըստ ոլորտների՝



	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ	
		2021թ.	2022թ.
1	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	3.5	4.0
2	Էներգետիկայի	6.2	3.1
3	Տրանսպորտի	4.0	2.8
4	Քաղաքաշինության	7.0	4.8
5	Հողօգտագործման	9.3	9.3

2.4) ***Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակի (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) հարաբերակցությունն ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակին.***

2022 թվականին Տեսչական մարմնի կողմից ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակը (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) ***0.9*** է:

Պատկերն ըստ ոլորտների՝



	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ	
		2021 թվական	2022 թվական
1	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	0.08	0.6
2	Էներգետիկայի	0	0
3	Տրանսպորտի	0	0.3
4	Քաղաքաշինության	0.06	1.3
5	Հողօգտագործման	1.5	1.2

2.5) Ստուգման ենթարկված օբյեկտների բավարարվածության աստիճանը տեսչական մարմնի աշխատանքների անաչառությունից, ընթացակարգերի թափանցիկությունից, տեղեկատվության որակից և տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժությունից.

Չափորոշչի գնահատումը կատարվել է հիմք ընդունելով նշված հարցերի վերաբերյալ ստացված դիմում-բողոքները: 2022 թվականի ընթացքում նշված հարցերի վերաբերյալ տեսչական մարմնի դեմ դիմում-բողոքներ չեն ներկայացվել:

3. ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

3.1) ***Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերությունը.***

2022 թվականին ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերությունը ***0.2*** է:

Պատկերն ըստ ոլորտների՝



	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ	
		2021 թվական	2022 թվական
1	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	0.2	0.1
2	Էներգետիկայի	0	0
3	Տրանսպորտի	0	1.2
4	Քաղաքաշինության	0.1	0.2
5	Հողօգտագործման	1.7	1.8

3.2) Տեսչական մարմնի վերահսկման բարձր ռիսկային բնագավառներում իրավիճակի փոփոխությունը.

Չափորոշչի գնահատման համար հիմք է հանդիսանում վերահսկողության արդյունքում բարձր ռիսկային բնագավառների տնտեսվարող սուբյեկտների ռիսկայնության փոփոխությունը: Չափորոշչի գնահատումը կատարվում է տարեկան մեկ անգամ:

Տրամադրված տեղեկատվության համաձայն բարձր ռիսկային բնագավառների տնտեսվարող սուբյեկտների ռիսկայնության փոփոխությունը ներկայացված է աղյուսակով՝

Ոլորտ	*Տարեկան ստուգումների քանակ (հատ)*	*Մինչև տուգումը բարձր ռիսկ ունեցող*	*Ռիսկայնության փոփոխությունը ստուգումից հետո*

		տնտեսավարողների քանակ (հատ)	Բարձր (3)	Միջին (2)	Ցածր (1)
Տրանսպորտի	21	16	1	9	6
Էներգետիկայի	115	113	40	48	25
Քաղաքաշինության	365	365	73	255	37
Տեխնիկական և հրդեհային անվտանգության	558	513	138	341	34

3.3) Ըստ առանձին ստուգման հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները հաշվարկվում են հաշվետու ժամանակահատվածում ստուգման համար հատկացված ֆինանսական միջոցների և մարդկային ռեսուրսների միջին ցուցանիշներով.

2022 թվականի ընթացքում իրականացված առանձին ֆինանսական միջոցներ և մարդկային ռեսուրսներ հատկացված 101 ստուգումներին միջինում 1 ստուգման համար հատկացվել է 53,7 հազ. դրամ, և միջինում 1 ստուգմանը մասնակցել է 1,4 աշխատակից։

Պատկերն ըստ ոլորտների՝



	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ (միջին 1 ստուգում)			
		2021թ.		2022թ.	
		Ծախս/ հազ.դրամ	Ռեսուրս/ աշխատակից	Ծախս/ հազ.դրամ	Ռեսուրս/ աշխատակից

1	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	19.6	1	19.2	1.3
2	Էներգետիկայի	16.2	1	20.5	1.1
3	Տրանսպորտի	98.0	3	32.6	1
4	Քաղաքաշինության	32.7	1.2	45.2	1.8
5	Հողօգտագործման	265.7	2.2	201.0	2.3

3.4) Տեսչական մարմնի, տեսչական մարմնի աշխատակիցների դեմ բերված դիմում-բողոքների քանակը և դրանց արդյունքները.

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

Տրանսպորտի ոլորտ.

Բողոքարկվել է 70 վարչական ակտ: Վերադաս քննության արդյունքում 64 վարչական ակտ թողնվել է անփոփոխ, 6 վարչական ակտ բեկանվել է, իսկ վարչական վարույթը կարճվել է:

Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ.

Բողոքարկվել է 20 վարչական ակտ: Վերադաս քննության արդյունքում 15 վարչական ակտերը թողնվել են անփոփոխ, իսկ բողոքներն՝ առանց բավարարման, 5 վարչական ակտը բեկանվել է վարչական վարույթը կարճվել:

Քաղաքաշինության ոլորտ.

Բողոքարկվել է 2 վարչական ակտ: Վերադաս քննության արդյունքում 2 վարչական ակտերը թողնվել են անփոփոխ:

Էներգետիկայի ոլորտ.

Բողոքարկվել է ոլորտի 2 վարչական ակտ: Վերադաս քննության արդյունքում 2 վարչական ակտերը թողնվել են անփոփոխ:

ԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում դատարան մուտքագրված 143 հայցադիմումից վարույթ է ընդունվել 100-ը, 8-ի ընդունումը մերժվել է, մյուսներն ընդունման փուլում են:



Հաշվետու տարում կայացվել է 51 դատական վճիռ, որոնցից 45 հայցապահանջ բավարարվել է, 6-ը՝ մերժվել:

Կայացված դատական վճիռների դեմ Տեսչական մարմնի կողմից բողոքարկվել է 7 վճիռ, վերաքննիչ բողոքները մերժվել են.

Հայցի ընդունումը մերժելու դեմ նախկինում կայացված դատարանի որոշումների դեմ տնտեսավարողի ներակայացրած 2 վերաքննիչ բողոքներից 2-ն էլ բավարարվել են։

Հայցապահանջը մերժելու դեմ տնտեսավարողի ներակայացրած 2 վերաքննիչ բողոքներից 2-ն էլ քննության փուլում են։

Ըստ ոլորտների պատկերը հետևյալն է.

Տրանսպորտի ոլորտ.

Ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացված 75 հայցադիմումից վարույթ է ընդունվել 53-ը, 3-ի ընդունումը մերժվել է, մյուսներն ընդունման փուլում են։

Կայացվել է 19 դատական վճիռ, որոնցից 17 հայցապահանջ բավարարվել է, 2-ը՝ մերժվել։

Հաշվետու տարում Տեսչական մարմնի կողմից ներկայացվել է 4 վերաքննիչ բողոք, որոնք մերժվել են՝ 3-ն անհիմն լինելու պատճառաբանությամբ, իսկ մեկ բողոքի վարույթի ընդունումն է մերժվել։ Հայցի ընդունումը մերժելու դեմ տնտեսավարողի կողմից բերված 1 վերաքննիչ բողոքը բավարարվել է։

Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ.

Ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացված 41 հայցադիմումից վարույթ է ընդունվել 32-ը, 2-ի ընդունումը մերժվել է, մյուսներն ընդունման փուլում են։ Կայացվել է 21 վճիռն, որոնցով Տեսչական մարմնի դեմ 17 հայցապահանջները բավարարվել են, իսկ 4-ը մերժվել։

Տեսչական մարմնի կողմից ներկայացված 3 վերաքննիչ բողոքները մերժվել են։ Տնտեսավարողի ներկայացրած 3 վերաքննիչ բողոքները քննության փուլում են։

Հայցի ընդունումը մերժելու դեմ տնտեսավարողի կողմից բերված 1 վերաքննիչ բողոքը բավարարվել է։

Քաղաքաշինության ոլորտ.

Ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացված 19 հայցադիմումից վարույթ է ընդունվել 10-ը, մյուսներն ընդունման փուլում են։

Կայացված 3 վճիռներով տնտեսավարողի հայցապահանջները բավարարվել են։

Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտ.

Ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացված 8 հայցադիմումներից 1-ը ընդունվել է վարույթ, 1-ի՝ ընդունումը մերժվել է։

Կայացված 8 վճիռներով տնտեսավարողի հայցապահանջները բավարարվել են։

Պատկերն ըստ ոլորտների՝



Տեսչական մարմնի դեմ ներկայացված հայցապահանջներով կայացված վճիռների գրաֆիկական պատկերը՝